

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ  
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2009

«Աշխարհագրություն» առարկայի չափորոշիչներն ու ծրագրերը մշակվել են ՀՀ ԿԳ նախարարի 10.11. 2006թ N892-Ա/Ք հրամանով հաստատված հանրակրթական ավագ դպրոց չափորոշիչների և ծրագրերի հիման վրա:

Լրամշակել է՝ Ա. Հովսեփյան

«Աշխարհագրություն» առարկայի ավագ դպրոցի ծրագրեր և չափորոշիչներ

**Վաճառքի ենթակա չէ:**

Երևան - 375070 Ս.Վրացյան փող. 73  
«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ.

*ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՈՒՆ»  
ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՀԱՐԱԿԻՑ ԵՎ ԽՈՐԱՑՎԱԾ  
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ  
ԾՐԱԳՐԵՐ*

«ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

«ԲՆՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

(Լրացուցիչ դասընթաց)

(Խորացված ուսուցում)

## Բ Ա Յ Ա Տ Ր Ա Գ Ի Ր

Հանրակրթական ավագ դպրոցում աշխարհագրական դիսցիպլինների ուսուցման անհրաժեշտությունը պայմանավորված է հիմնական դպրոցի կրթական ծրագրերի բովանդակային շարունակականության և սովորողների աշխարհագրական մտածողության զարգացման իրականացման հրամայականով: Այն հիմնված է գիտության այդ ճյուղի աշխարհայացքային, համամշակութային, կրթաճանաչողական, գործնական նշանակությամբ, սովորողների հայրենասիրական և բնապահպանական դաստիարակության, մտածողության որոշակի մակարդակի ձևավորման գործում նրա ունեցած կարևորությամբ:

Առարկայի չափորոշիչի մշակման համար գլխավոր փաստաթուղթ են հանդիսացել «Հանրակրթության պետական կրթակարգ», «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը», Հանրակրթական հիմնական դպրոցի «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկաների չափորոշիչները և ծրագրերը (2008թ.), «Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության պետական չափորոշիչը» (2000թ.), «Աշխարհագրություն» «Հայաստանի աշխարհագրություն» առարկաների ծրագրերը:

«Աշխարհագրություն» ուսումնական առարկայի չափորոշիչը սույն բացատրագրի հետ մեկտեղ ներառում են՝

- *աշխարհագրության դասընթացների հայեցակարգը*, որում ներկայացված են այն հարցադրումներն ու հիմնադրույթները, որոնք կողմնորոշիչ նշանակություն ունեն ավագ դպրոցի կրթության բովանդակության մեջ աշխարհագրության դասընթացների գործառույթները որոշելու և կրթության կազմակերպմանն անհրաժեշտ նյութերը՝ չափորոշիչները, ծրագրերը, ուսումնական և ուսումնամեթոդական գրականությունը մշակելու համար,
- *հանրակրթական ավագ դպրոցի աշխարհագրության ուսումնական նպատակները*,
- *աշխարհագրության առարկայախմբի յուրաքանչյուր առարկայի և դասընթացի բովանդակային պարտադիր միջուկը* (հենքային բովանդակությունը) ավագ դպրոցի համար՝ ըստ բովանդակային հիմնական գծերի,
- *սովորողների պատրաստվածությանը* (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) *ներկայացվող պահանջների նկարագրությունները*, ընդ որում՝ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերաբերող պահանջները ներկայացված են երեք՝ Ա, Բ, Գ խմբերով, որոնք համապատասխանում են՝ Ա- նվազագույն, Բ-միջին, Գ- առավելագույն պատրաստվածությանը,
- *ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման կարգը*, որում հստակեցվում և որոշակիացվում են գնահատման «10» միավորային սանդղակը, աշակերտների բանավոր հարցումները և գրավոր աշխատանքները ստուգելու, ընթացիկ և կիսամյակային գնահատումներ կատարելու սկզբունքները,
- *գրականության ցանկ*:

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ»**  
**ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՀԱՐԱԿԻՑ ԵՎ ԽՈՐԱՑՎԱԾ**  
**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ**

**Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ**

Աշխարհագրական կրթությունը բոլոր երկրների ավագ դպրոցներում ներկայացված է հիմնականում ինտեգրված կամ ճյուղային աշխարհագրական խորացված ուսուցման ծրագրերի միջոցով:

Ավագ դպրոցում առանձին առարկաների և դասընթացների միջոցով դասավանդվող աշխարհագրության դիսցիպլինների նպատակն է սովորողների մեջ խորացնել հիմնական դպրոցի աշխարհագրության չափորոշիչներով ու ծրագրերով ամրագրված աշխարհագրական գիտելիքներն ու կարողությունները, որն անհրաժեշտ է ինչպես յուրաքանչյուր սովորողին անկախ ապագա մասնագիտությունից ու գործունեության ոլորտից, այնպես էլ որոշակի մասնագիտական կողմնորոշում ունեցող յուրաքանչյուր ապագա մասնագետի:

Ավագ դպրոցում սովորողների մեջ աշխարհագրական մտածողության ամբողջացումը իրականացվում է բնական և հասարակական տարածական համալիրների կառուցվածքային բաղադրիչների վեաբերյալ մանկավարժորեն հարմարեցված ուսումնական ինտեգրված թեմատիկ միավորների պարուրածն խորացման միջոցով: Այդ պատճառով խիստ կարևորվում են յուրաքանչյուր թեմատիկ միավորի բովանդակային բոլոր տարրերի միջև փոխկապակցվածության և ներքին կառուցվածքի ամբողջականության սկզբունքների պահպանումը:

Ավագ դպրոցի աշխարհագրության դասընթացներն ունեն բացառիկ կրթադաստիարակչական գործառույթ, որով սովորողի համար հնարավորություն են ստեղծում համամոլորորակային ընդգրկում ունեցող բնական և հասարակական տարրերն ու երևույթները ճանաչելու միջոցով հասկանալ և գնահատել սեփական հայրենիքի տեղն ու դերը հարավոփոխ աշխարհում: Գրանք միաժամանակ ուղղված են խորացնելու և ամբողջացնելու այն փոխադարձ կապերի բնույթն ու առանձնահատկությունները, որոնք գոյություն ունեն մի կողմից՝ մարդու և շրջակա միջավայրի, մյուս կողմից՝ Հայաստանի և նրա հեռու ու մոտիկ տարածաշրջանների միջև և դրանց միջոցով նպաստում են սովորողի ինչպես ընդհանուր կրթական մակարդակի բարձրացմանը, այնպես էլ էկոլոգիական և քաղաքական կուլտուրայի ձևավորմանը:

Ավագ դպրոցում աշխարհագրական գիտելիքների շնորհիվ ամբողջանում է այն համոզմունքը, որ աշխարհը ճանաչելի է, նյութական, միասնական, բնության ու հասարակական կյանքի բաղադրիչները գտնվում են սերտ կապի մեջ, այդ բաղադրիչները առանձին-առանձին ու միասնաբար անընդհատ զարգանում և փոփոխվում են ժամանակի և տարածության մեջ: Սովորողի գիտական աշխարհայացքի ձևավորումն արդյունավետ իրականացնելու համար պետք է նկատի ունենալ վերջինիս մանկավարժահոգեբանական

օրինաչափությունները (սովորողների տարիքային, հոգեբանական առանձնահատկությունները և նախասիրությունները), դպրոցական աշխարհագրության կրթադաստիարակչական խնդիրները:

Ավագ դպրոցն ավարտողը պետք է իմանա բնության և հասարակության մեջ դիտվող երևույթների տարածաժամանակային փոփոխությունների գլխավոր պատճառները, հիմնական օրինաչափությունները և տեղական, տարածաշրջանային և համամոլորակային մակարդակներում՝ դրանք բացատրող տեսությունները, մարդու վրա միջավայրի ազդեցության տարբեր գործոնները, բնօգտագործման և բնապահպանության հիմունքները, ծանոթ լինի տեղական, տարածաշրջանային և համընդհանուր էկոլոգիական հիմնախնդիրներին:

Միաժամանակ, ավագ դպրոցն ավարտողը պետք ունենա հետևյալ կարողություններն ու հմտությունները՝ մոդելավորել, վարկածներ առաջարկել և փորձնական ճանապարհով ստուգել ստացված արդյունքները, դրանք համակարգել և մեկնաբանել, տիրապետել ճանաչողության ընդհանուր մեթոդներին, տեսնել շրջապատում եղած իրերի և երևույթների փոխադարձ կապը, կիրառել բնագիտական օրենքների և տեսությունների իմացությունը բնության երևույթները բացատրելու համար, տարբերել գիտական փաստ, օրինաչափություն, օրենք, սկզբունք, տեսության հասկացությունները, ստացած գիտելիքները համակարգել այդ հասկացությունների շրջանակներում, փիլիսոփայական որոշ ընդհանրացումներ անել բնական երևույթների և շրջապատող աշխարհի մասին, դրսևորել ընդհանուր էկոլոգիական գրագիտություն և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունք:

Ավագ դպրոցն ավարտողը որպես արժեքային համակարգի տարրեր պետք է պարտավորություն կրի բնության, հասարակության, սեփական անձի հանդեպ, ըմբռնի բնության հետ ներդաշնակ ապրելու անհրաժեշտությունը:

Ավագ դպրոցն ավարտողը պետք է իմանա աշխարհի միասնականության և բազմազանության վերաբերյալ փիլիսոփայական (աշխարհագրական) դրույթը և դրա դրսևորումն արդի ժամանակաշրջանում, համակարգված գիտելիքներ ունենա ժամանակակից աշխարհի քաղաքական կառուցվածքի, Հայաստանի և տարածաշրջանի աշխարհագրական ու տնտեսական իրավիճակի մասին, պատկերացում ունենա արդի համամոլորակային հիմնախնդիրների, միջազգային հարաբերությունների առանձնահատկությունների և Հայաստանի համար համաշխարհայնացման (գլոբալացում) հնարավոր հետևանքների մասին, իմանա ճանաչողության գործընթացի փուլերը և մեթոդները, հասկանա մարդու՝ որպես ճանաչողության օբյեկտի և սուբյեկտի փոխադարձ կապը:

Ավագ դպրոցն ավարտողը պետք է ունենա հետևյալ կարողություններն ու հմտությունները՝ վերլուծել և մեկնաբանել հասարակական իրադարձությունները, երևույթները, համակարգերը, բացահայտել դրանց պատճառահետևանքային կապերը, տարբերակել և գնահատել համաշխարհային ժամանակակից գործընթացները, սկզբնաղբյուրները և սոցիալական տեղեկատվությունը գնահատել, վերլուծել, համեմատել և մտահանգումներ անել, ճիշտ գնահատել սեփական ունակություններն ու հնարավորությունները մասնագիտություն ընտրելիս, կատարել ստեղծագործական բնույթի հետազոտական աշխատանքներ, կազմել քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական

հիմնախնդիրների լուծման ինքնուրույն նախագծեր, դրսևորել տրամաբանական և ստեղծագործական մտածողություն:

Ավագ դպրոցում սովորողը պետք է խորացնի քարտեզագրական գիտելիքները, կարողանա սեփական ուսումնասիրությունների հիման վրա կազմել հստակ բովանդակությամբ քարտեզներ, կարողանա օգտվելով տեղագրական քարտեզներից կատարել չափումներ, բազմաբովանդակ ծրագրային տարբեր հետազոտություններ:

Ավագ դպրոցն ավարտողը պետք է որպես արժեքային համակարգի բաղադրիչներ կարևորի ազգային-պետական մտածողություն և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք, լինի իրական հայրենասեր, գիտակցի իր ժողովրդի նյութական ու հոգևոր արժեքները պահպանելու ու զարգացնելու անհրաժեշտությունը, կարևորի ազգամիջյան և միջազգային հարաբերություններում փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության և բարիդրացիության անհրաժեշտությունը, կարևորի «Կրթություն ողջ կյանքի ընթացքում» ելակետային սկզբունքը և հետևի դրան:

Աշխարհագրության ավագ դպրոցի բովանդակությունը կառուցված է դպրոցի ընդհանուր հանրակրթական և խորացված (հոսքային) ուսուցման հաշվառումով:

Հանրակրթական ավագ դպրոցում, ըստ հոսքերի, աշխարհագրական գիտելիքները ներկայացված են հետևյալ կերպ՝

- Ընդհանուր, բնագիտական ու հումանիտար հոսքերի 10-12-րդ դասարաններում «Աշխարհագրություն» առարկայի «Ընդհանուր աշխարհագրություն» դասընթացով,
- Բոլոր հոսքերի 10-11-րդ դասարաններում «Բնօգտագործում և բնապահպանություն» լրացուցիչ դասընթացով, ինչպես նաև առանձին «Քաղաքական աշխարհագրություն» թեմատիկ միավորով, որպես «Հասարակագիտություն» ինտեգրված առարկայի բաղադրիչ,
- Հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերի համապատասխան ենթահոսքերում «Աշխարհագրություն» (խորացված ուսուցման) և լրացուցիչ այլ դասընթացներով:

Այսպիսով, աշխարհագրությունը ավագ դպրոցում կունենա հետևյալ կառուցվածքը և ժամաքանակը.

- Ընդհանուր, բնագիտամաթեմատիկական հոսք՝ 10-12-րդ դասարաններ- «Ընդհանուր աշխարհագրություն».....4 ժամ
- Ընդհանուր հոսք՝ 10-11-րդ դասարաններ-«Բնօգտագործում և բնապահպանություն»..... 2 ժամ
- 10-12-րդ դասարաններ-բնագիտամաթեմատիկական, հումանիտար հոսքերի խորացված ուսուցում.....17 ժամ
- 10-11-րդ դասարաններ-բնագիտամաթեմատիկական հոսքի հարակից առարկայական ուսուցում .....2 ժամ

## Ուսումնական գործունեության տեսակները

Ուսուցման գործընթացում՝ կախված թեմայից, դասի նպատակներից, դասարանից, սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դասի առանձին հատվածի համար կարող են ընտրվել ուսումնական գործունեության տեսակները՝ ուսումնական նյութի բացատրում, լուսաբանում, մոդելների, քարտեզների դիտարկում, ցուցադրում, պատրաստում, տեղանքի դիտարկում, ուսումնասիրում, էքսուրսիաների անցկացում, նկարների, ֆիլմերի դիտում, քննարկում, ուսումնական ձեռնարկների և այլ աղբյուրների ուսումնասիրում, չափողական, գործնական և փորձնական աշխատանքների կատարում, գրաֆիկական և քարտեզագրական աշխատանքների կատարում, հիմնահարցերի հետազոտում, աշխարհագրական խնդիրների և վարժությունների կատարում, ստեղծագործական աշխատանքների կատարում, տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարում, խաղերի, մրցույթների, հանդեսների անցկացում, իրավիճակների և արդյունքների վերլուծում, հաշվետվությունների պատրաստում, գրավոր աշխատանքների կատարում, հաղորդում, բանավոր և գրավոր հարցադրումների, թեստային աշխատանքների, ստուգարքների անցկացում, նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծարգրերի օգտագործում, անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:



# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր աշխարհագրություն

Բովանդակային միջուկ

(ավագ դպրոց)

Աշխարհագրության բոլոր ճյուղերի համար ընդհանուր ուսումնասիրության օբյեկտները, տարածքային կառուցվածքային միավորները և դրանցից յուրաքանչյուրին բնորոշ օրինաչափությունները:

**Աշխարհագրական հետազոտության մեթոդներ.** դաշտային հետազոտության, քարտեզագրական մեթոդներ (քարտեզագրական ընդհանրացում(գեներալիզացիա): Տեղագրական քարտեզներ): Աշխարհատեղեկատվական(գեոինֆորմացիոն) համակարգեր: Պատմական, համեմատական-աշխարհագրական և վիճակագրական մեթոդներ:

## **Երկրագնդի բնությունը: Աշխարհագրական թաղանթ**

Երկրագնդի առաջացումը: Երկրի ձևի(գեոիդ), չափերի, ներքին կառուցվածքի վերաբերյալ ժամանակակից պատկերացումները: Երկրի մագնիսականությունը: Երկրի գրավիտացիոն(ծանրահակ) դաշտը: Երկրի պտույտը իր առանցքի և Արեգակի շուրջը: Երկրագնդի ժամային գոտիները:

Աշխարհագրական թաղանթի զարգացման փուլերը, երկրաժամանակագրական աղյուսակ: Աշխարհագրական թաղանթի ոլորտների զարգացումը, կառուցվածքը, հիմնական հատկանիշները և զարգացման օրինաչափությունները:

Աշխարհագրական թաղանթի ամբողջականությունը, կառուցվածքայնությունը, ռիթմայնությունը, գոտիականությունը: Նյութերի(օդի, ջրի և օրգանիզմների շրջապտույտը աշխարհագրական թաղանթում) և էներգիայի շրջապտույտը աշխարհագրական թաղանթում:

Մարդու առաջացումը և գործունեությունը աշխարհագրական թաղանթում:

## **Աշխարհի քաղաքական բաժանումը**

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորումը, դրա փուլերը: Աշխարհի պետությունների դասակարգումը ըստ պետական կառուցվածքի, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի:

Աշխարհաքաղաքականություն(գեոպոլիտիկա), հիմնական տեսություններն ու հայեցակարգերը: Աշխարհաքաղաքականության ազդեցությունը միջազգային հաղորդակցության ուղիների տեղաբաշխման վրա: Հայաստանի Հանրապետությունը ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներում:

**Աշխարհի բնակչության աշխարհագրություն**

Աշխարհի տարաբնակեցման անհամաչափությունները: Բնակչության թիվը, վերարտադրությունը, կազմը: Բնակչության տեղաբաշխումը, տարաբնակեցումը: Ուրբանիզացիա: Խոշոր ագլոմերացիաները:

**Համաշխարհային տնտեսություն**

Համաշխարհային տնտեսության ձևավորումը և զարգացումը: Գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա:

**Աշխարհի բնական ռեսուրսների աշխարհագրություն**

Երկրագնդի ապահովվածությունը հանքային, հողային, գրողկլիմայական, ցամաքի ջրային ռեսուրսներ, Համաշխարհային օվկիանոսի, կենսաբանական, տիեզերական, նեկրեացիոն ռեսուրսներով:

**Աշխարհի արդյունաբերության աշխարհագրություն**

Աշխարհի արդյունաբերության ընդհանուր բնութագիրը, զարգացման միտումները, ճյուղային կառուցվածքի և առանձին ճյուղերի տեղաբաշխման գործոնները, սկզբունքները, մոդելները:

**Աշխարհի գյուղատնտեսության աշխարհագրություն**

Աշխարհի գյուղատնտեսության ճյուղերի(բուսաբուծություն, անասնապահություն, ձկնորսություն) զարգացման միտումները, գլխավոր ուղղությունները, տեղաբաշխման շրջանները:

**Աշխարհի տրանսպորտի աշխարհագրություն**

Տրանսպորտի զարգացման ժամանակակից ուղղությունները: Ցամաքային, ջրային, օդային տրանսպորտային միջազգային ուղիները:

**Միջազգային տնտեսական հարաբերություններ**

Միջազգային առևտուր: Ֆինանսավարկային, գիտատեխնիկական, մշակութային փոխհարաբերություններ: Միջազգային զբոսաշրջություն: Տնտեսության միջազգայնացումը, գլոբալացումը: Տնտեսական ինտեգրացիա:

**Բնություն-հասարակություն փոխհարաբերությունները**

Բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը և դրա խախտման պատճառներն ու հետևանքները: Բնօգտագործումը և շրջակա միջավայրի չկանխատեսվող փոփոխությունները: Շրջակա միջավայրի մարդածին աղտոտումը: Աղտոտման աղբյուրները, տեսակները:

Աշխարհագրական թաղանթի ոլորտների օգտագործման և պահպանման առանձնահատկությունները:

Քարոլորտ: Ընդերքի ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ու պահպանումը:

Մթնոլորտ. աղտոտման աղբյուրները, տեսակները, պահպանումն աղտոտումից: Աղտոտման հետևանքները: Ջերմոցային էֆեկտ: Կլիմայական ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրը:

Ջրոլորտ: Ջրային ռեսուրսներ: Բաշխումը երկրագնդի վրա: Ջրօգտագործման ոլորտները: Ջրային ավազանների աղտոտման աղբյուրները, պահպանման առանձնահատկությունները:

Կենսոլորտ: Ջարգացման և ինքնավերականգնման օրինաչափությունները: Հողային ռեսուրսներ, օգտագործման առանձնահատկությունները, աշխարհագրական տարբերությունները, պահպանումը: Բուսական ռեսուրսներ: Ռ-ացիոնալ օգտագործումը, վերականգնումը, պահպանումը: Կենդանական ռեսուրսներ: Կենդանական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, վերականգնումը և պահպանումը: Կենսաբազմազանության (գենոֆոնդի) պահպանման հիմնախնդիրը:

#### **Համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը**

Հասարակության հավասարակշռված (կայուն) զարգացման հայեցակարգը: Համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը:

#### **Աշխարհի ինքնատիպ տարածաշրջաններն ու երկրները**

Հասարակության տարածքային կազմակերպման տարածաշրջանային և համամոլորակային մոդելները, դրա հետևանքով առաջացած հիմնախնդիրները: Աշխարհի ինքնատիպ բնատնտեսական պայմաններ ունեցող շրջանները, դրանցում հասարակության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները:

#### **Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները**

Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները, դրանց լուծման ժամանակակից ռազմավարությունները:

Հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների, բնության պահպանության, ժողովրդագրական, պարենային, թույլ զարգացած երկրների հետամնացության վերացման և բնակչության աղքատության հաղթահարման, տարածքային և էթնիկ հակամարտությունների, համաշխարհային օվկիանոսի համամոլորակային հիմնախնդիրները:

<b>Ավագ դպրոց</b> <b>Սովորողների ներկայացվող պահանջները</b> <b>Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ</b>		
<b>Ա խումբ</b> <b>սյարտադիր նվազագույն մակարդակ</b>	<b>Բ խումբ</b> <b>միջին մակարդակ</b> <b>(ավելանում են Ա խմբի պահանջներին)</b>	<b>Գ խումբ</b> <b>առավելագույն մակարդակ</b> <b>(ավելանում են Ա և Բ խմբերի</b> <b>պահանջներին)</b>
<p><b>Գաղափար ունենա</b> աշխարհագրության ճյուղերի(ներքին) այլ գիտությունների (արտաքին) փոխադարձ կապերի, ընդհանուր աշխարհագրության ուսումնասիրման օբյեկտների, տարածքային կառուցվածքային միավորների մասին:</p>	<p><b>Իմանա</b> ընդհանուր աշխարհագրության ուսումնասիրման առարկան(օբյեկտները), դրանցից յուրաքանչյուրին բնորոշ օրինաչափությունները:</p> <p><b>Կարողանա բացատրել</b>, համամոլորակային, տարածաշրջանային, տեղական մակարդակներում բնական և հասարակական օբյեկտների ու երևույթների փոփոխության և զարգացման տարածական անհամասեռության գլխավոր պատճառները:</p>	<p><b>Կարողանա</b> բնական և հասարակական որևէ երևույթի կամ օբյեկտի օրինակով՝ վեր հանել օրինաչափություններ, որոնք ընդհանուր են աշխարհագրության բոլոր ճյուղերի համար:</p>
<p><b>Կարողանա</b> դաշտում կատարել ուսումնասիրվող օբյեկտի քանակական տվյալների հավաքագրում՝ դիտումների, չափումների, վիզուալ (ակնադիտական) հաշվարկների հիման վրա, տեղագրական քարտեզի վրա կատարել տարբեր օբյեկտների հեռավորությունների,</p>	<p><b>Իմանա</b> աշխարհագրության հետազոտության մեթոդներ(քարտեզագրական, պատմական, համեմատական-աշխարհագրական, վիճակագրական), դրանց կիրառությունը աշխարհագրական տարբեր երևույթներ ու օբյեկտներ ուսումնասիրելիս: Իմանա տեղագրական քարտեզների</p>	<p>Տեղագրական քարտեզով <b>կարողանա</b> հետազոտել իր տեղանքում հանձնարարված երևույթի և (կամ)օբյեկտի տեղաբաշխման (տարածման) չափերը, որոշել զարգացման օրինաչափությունները և սեփական կանխատեսումների հիման</p>

<p>անկյունների ու մակերեսների չափումներ:</p>	<p>ըստ մասշտաբի դասակարգման սկզբունքները: <b>Կարողանա</b> փոքր մասշտաբի թեմատիկ քարտեզի վրա, տրված առաջադրանքով, կատարել քարտագրական ընդհանրացում, օգտվել աշխարհատեղեկատվական համակարգերից և անհրաժեշտ տվյալներ հավաքել որևէ աշխարհագրական օբյեկտի (աշխարհ, տարածաշրջան, պետություն, շրջան) վերաբերյալ:</p>	<p>վրա քարտեզագրել այն: <b>Կարողանա</b> տրված առաջադրանքով համացանցի միջոցով աշխարհատեղեկատվական համապատասխան համակարգից դուրս գրել տվյալներ և դրանցով կատարել համապատասխան վերլուծություններ: Կարողանա տրված վիճակագրական տվյալներով կազմել աղյուսակներ, գրաֆիկներ, դիագրամներ, սխեմատիկ քարտեզներ:</p>
<p><b>Գաղափար ունենա</b> արեգակնային համակարգի, երկրագնդի առաջացման վարկածների, Երկրի մագնիսականության մասին: Իմանա «տեղական» և «գոտիական» ժամանակ հասկացությունները:</p>	<p><b>Իմանա</b> արեգակնային համակարգի, երկրագնդի առաջացման վարկածների մասին: <b>Իմանա</b> աշխարհագրական թաղանթի զարգացման երկրաբանական, կենսաբանական փուլերը: <b>Կարողանա</b> բացատրել Արեգակի շուրջը Երկրի պտույտի հետևանքով առաջացած բնական և հասարակական երևույթները, երկրագնդի ցանկացած կետում որոշել տեղական և գոտիական ժամանակը:</p>	<p><b>Կարողանա</b> ներկայացնել աշխարհագրական թաղանթի տարբեր ոլորտների զարգացման ընթացքը ըստ երկրաժամանակագրական աղյուսակի: Ուսուցչի օգնությամբ և սեփական դիտումների և այլ հետազոտությունների հիման վրա <b>կարողանա</b> որոշել որևէ իր տեղանքի որևէ ապարի մոտավոր հասակը:</p>

<p><b>Իմանա</b> աշխարհագրական թաղանթի բոլոր ոլորտների տարածման սահմանները, յուրաքանչյուր ոլորտի կառուցվածքային խոշոր միավորները: <b>Կարողանա</b> բերել աշխարհագրական թաղանթի ոլորտների միջև փոխադարձ կապի, ռիթմիկ երևույթների օրինակներ:</p>	<p><b>Իմանա</b> աշխարհագրական թաղանթի ոլորտների ֆիզիկաքիմիական գլխավոր հատկությունները, դրանց ուղղաձիգ և հորիզոնական (տարածական) կառուցվածքները, յուրահատուկ գործընթացներն ու երևույթները, բնատարածքային համալիրների առանձնացման սկզբունքները: <b>Կարողանա</b> բացատրել աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշները. ամբողջականությունը, կառուցվածքայնությունը, ռիթմայնությունը, գոտիականությունը, նյութերի, օդի, ջրի, օրգանիզմների շրջապտույտի մեխանիզմը:</p>	<p><b>Կարողանա</b> բացատրել աշխարհագրական թաղանթի յուրաքանչյուր ոլորտում ուղղաձիգ և հորիզոնական ուղղությամբ նյութի խտության փոփոխությունների օրինաչափությունները, գնահատել իր շրջակա բնատարածքային համալիրում նյութերի(լեռնային ասպարների, հողաշերտի) քայքայման քայքայման և վերականգնման չափերը:</p>
<p><b>Կարողանա</b> աշխարհի պետությունները դասակարգել ըստ պետական կարգի, սոցիալ-տնտեսական աճի մակարդակի: <b>Գաղափար ունենա</b> աշխարհաքաղաքականության մասին:</p>	<p><b>Իմանա</b> պետությունների ըստ սոցիալ-տնտեսական աճի մակարդակի դասակարգման հիմնական ցուցանիշները, դրանց որոշման մեթոդները: <b>Կարողանա</b> բացատրել «աշխարհաքաղաքականություն» հասկացությունը, աշխարհաքաղաքականության ազդեցությունը միջազգային հաղորդակցության ուղիների տեղաբաշխման վրա:</p>	<p><b>Կարողանա</b> բացատրել ցիկլային զարգացման և համաշխարհային լիդերության հայեցակարգերը, դրանց ազդեցությունը ժամանակից աշխարհաքաղաքական գործընթացների վրա: <b>Կարողանա</b> կանխատեսումներ անել Հայաստանի Հանրապետության վրա ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցության վերաբերյալ:</p>

<p><b>Իմանա</b> աշխարհի բնակչության թիվը, տարեկան աճի ցուցանիշը, ժամանակակից միգրացիաների հիմնական ուղղությունները և պատճառները, բնակչության կազմի ցուցանիշները (տարատեսակները): <b>Գաղափար ունենա</b> բնակչության վերարտադրության (բնական շարժի) ցուցանիշներին և ռեժիմներին: <b>Իմանա</b> աշխարհի բնակչության սեռային, տարիքային, ռասայական, էթնիկական, կրոնական կազմի բնորոշ գծերը, բնակչության խտությունը, գյուղական տարաբնակեցման հիմնական ձևերը: <b>Կարողանա քվարկել</b> և քարտեզի վրա <b>ցույց տալ</b> աշխարհի խոշորագույն քաղաքներն ու քաղաքային ագլոմերացիաները, օգտվելով համապատասխան պայմանանշանից քարտեզի վրա <b>տարբերել</b> քաղաքներն ըստ մարդաչատության և ըստ գործառույթների, մեզապոլիսները, աշխարհի առավել բարձր ուղբանիզացման մակարդակ ունեցող երկրները, աշխարհի խիտ և նոսր բնակեցված, անմարդաբնակ շրջանները, օգտվել բնակչության թվի գրաֆիկներից և վիճակագրական աղյուսակներից:</p>	<p><b>Իմանա</b> բնակչության վերարտադրության տիպերն ու ռեժիմները, վերարտադրության տարբեր տիպի երկրների օրինակներ, աշխարհի խոշոր լեզվաընտանիքները, լեզվախմբերը, լեզուները, համաշխարհային կրոնները, դրանց տարածման արեալները, բնակչության միգրացիայի պատճառները, երկրագնդի վրա բնակչության ամենամեծ կուտակման արեալները, <b>կարողանա հաշվարկել</b> ժողովրդագրական առանձին ցուցանիշները. միջին խտություն, բնական աճ:</p>	<p><b>Իմանա</b> երկրագնդի վրա բնակչության ամենամեծ կուտակման արեալների ձևավորման պատճառները, ժողովրդագրական և միգրացիոն քաղաքականության բովանդակությունը: <b>Կարողանա քացատրել</b> միգրացիոն գործընթացների ազդեցությունն առանձին տարածքների բնակչության կազմի վրա, <b>վերլուծել</b> տեքստային, քարտեզագրական և վիճակագրական նյութերը՝ աշխարհի տարբեր տարածաշրջանների բնակչության վերարտադրության և կազմի տարբերությունների բացահայտման նպատակով, <b>կառուցել</b> բնակչությանը և տնտեսությանը վերաբերող դիագրամներ, գրաֆիկներ, քարտեզասխեմաներ, կորեր:</p>
--	--	---

<p><b>Իմանա</b> բնական ռեսուրսների տեսակները:</p> <p><b>Գաղափար ունենա</b> երկրագնդի բնական ռեսուրսների տարածման հիմնական շրջանների մասին:</p>	<p><b>Իմանա</b> բնական ռեսուրս, ռեսուրսապահովվածություն, աշխարհագրական միջավայր հասկացությունները: <b>Կարողանա բացատրել</b> երկրագնդի ապահովվածությունը հանքային, հողային, ագրոկլիմայական, ցամաքի ջրային, Համաշխարհային օվկիանոսի, կենսաբանական, տիեզերական բնական ռեսուրսներով:</p>	<p><b>Իմանա</b> բնական ռեսուրսների տնտեսական գնահատման բովանդակությունը: Օգտվելով բնական ռեսուրսների վերաբերյալ տեքստային, աղյուսակային, քարտեզագրական տվյալներից <b>կարողանա կազմել</b> աշխարհում տարբեր բնական ռեսուրսների շահագործման չափերի վերաբերյալ դիագրամներ և գրաֆիկներ:</p>
<p><b>Իմանա</b> համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալները, <b>գաղափար ունենա</b> աշխատանքի միջազգային բաժանման մասին:</p> <p><b>Գաղափար ունենա</b> աշխարհի արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, զբոսաշրջության տեղաբաշխման սկզբունքների, գործոնների մասին:</p>	<p><b>Իմանա</b> համաշխարհային տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի զարգացման միտումները, դրանց ազդեցությունը երկրների ազգային տնտեսության վրա: <b>Իմանա</b> տնտեսության համաշխարհայինացում(գլոբալացում), տնտեսական ինտեգրացիա հասկացությունները: <b>Կարողանա</b> բացատրել արդյունաբերության առանձին ճյուղերի տեղաբաշխման սկզբունքները, գործոնները, մոդելները: <b>Իմանա</b> գյուղատնտեսության ճյուղերի զարգացման գլխավոր ուղղությունները, ինտենսիվացման միտումները, տրանսպորտի տարբեր տեսակների զարգացման հեռանկարները, միջազգային տուրիստական ծառայությունները:</p>	<p><b>Կարողանա</b> օգտվելով աշխարհատեղեկատվական համակարգերից, թեմատիկ քարտեզներից, քարտեզասխեմաներից, դիագրամներից և տեղեկատվական այլ աղբյուրներից վերլուծել համաշխարհային տնտեսության որևէ ճյուղի, ենթաճյուղի տեղաբաշխման փոփոխությունների գլխավորուղղությունները: <b>Կարողանա</b> վերլուծել տնտեսության համաշխարհայինացման դրական և բացասական հետևանքները:</p>



<p><b>Իմանա</b> բնական միջավայր, էկոլոգիական հավասարակշռություն, էկոլոգիական ճգնաժամ, բնօգտագործում, հասկացությունների բովանդակությունը, իր բնակավայրի բնական ռեսուրսների տեսակները և դրանց օգտագործողներին, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտման տեսակները: <b>Կարողանա</b> հիմնավորել արտադրության քանակական աճը որպես հասարակական առաջադիմության գլխավոր ցուցանիշ չհամարվելու արդի տեսակետը:</p>	<p><b>Իմանա</b> ջերմոցային էֆեկտ, բնական միջավայրի որակ հասկացությունների բովանդակությունը: <b>Կարողանա բերել</b> օրինակներ իր բնակավայրից բնական միջավայրի վրա մարդու ներգործության գլխավոր հետևանքների մասին, որևէ երկրահամակարգի օրինակով բացատրել դրա բաղադրիչներից մեկի փոփոխության ազդեցությունը մյուս բաղադրիչների և ամբողջ համակարգի վրա, հիմնավորել բնության պահպանության անհրաժեշտությունը, բերել որևէ երկրում ռացիոնալ և ոչ ռացիոնալ բնօգտագործման օրինակներ՝ ըստ բնական ռեսուրսների տեսակների:</p>	<p><b>Իմանա</b> ռացիոնալ և ոչ ռացիոնալ բնօգտագործում, առողջ, անառողջ և էքստրեմալ միջավայր հասկացությունների բովանդակությունը, բնական ռեսուրսների դասակարգումը՝ ըստ օգտագործման եղանակի, բնական ռեսուրսների գնահատման տնտեսական, սոցիալական, էկոլոգիական տեսակները, իր բնակավայրի բնական պայմանների և հասարակական գործունեության միջև առկա կապերը: <b>Կարողանա</b> որևէ բնական ռեսուրսի օրինակով բացատրել դրան այլ ռեսուրսներով փոխարկելիության հնարավորությունները:</p>
<p><b>Իմանա</b> օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման վերգետնյա (բաց), ստորգետնյա (հանքահորային), ստորջրյա եղանակները, Երկրագնդի ջրային ռեսուրսների բաշխումը և դրանցում քաղցրահամ ջրի բաժինը, ջրի ջերմաստիճանի ազդեցությունը նրա խտության վրա, ջրային ռեսուրսների բաշխումը Երկրագնդի վրա, քաղցրահամ ջրի բաժինը ջրոլորտում, ջրի</p>	<p><b>Իմանա</b> բնական ռեսուրսների գնահատումը, մթնոլորտում ածխածնի օքսիդի (CO), ծծմբական գազի (SO<sub>2</sub>) ազոտի օքսիդների (NO, NO<sub>2</sub>) քանակության ավելացման գլխավոր աղբյուրները, կանաչ գոտիների ստեղծման դերը թունավոր արտանետումների նվազեցման և օդային ավազանի պահպանության գործում, ջրային ռեսուրսների քանակական և որակական</p>	<p><b>Իմանա</b> ընդերքի ռեսուրսների համալիր օգտագործման հիմնախնդրի էությունը: <b>Կարողանա</b> գնահատել մարդկության հանքային (վառելիքային, մետաղային) ռեսուրսներով ապահովվածության աշխարհագրական տարբերությունները, հավաքել տեղեկություններ իր շրջապատը աղտոտող նյութերի վերաբերյալ, բացա-</p>

<p>արհեստական մաքրման ձևերը, ջրոլորտն աղտոտող հիմնական նյութերի ազդեցությունը օրգանիզմների վրա, ջրամբարների և փոքր լճերի «ծաղկման» երևույթը, Համաշխարհային օվկիանոսում վնասակար նյութերի կուտակման գլխավոր շրջանները, հողի՝ որպես գյուղատնտեսության և անտառատնտեսության գլխավոր արտադրամիջոցի նշանակությունը, հողերի դեգրադացիայի (քայքայման) գլխավոր պատճառները, հողաբարելավման տարածված միջոցառումները, Երկրագնդի ցամաքի բուսազանգվածը, դրանցում անտառների բաժինը, բուսական ռեսուրսների վերականգնման հիմնական ուղղությունները, բույսերի միջավայրաստեղծ, էկոլոգիական նշանակությունը,</p> <p>բնօգտագործման և բնապահպանության միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունները, բնապահպանական բնույթի համամոլորակային հիմնախնդիրներ: <b>Կարողանա քվարկել</b> համաշխարհային օվկիանոսի աղտոտման գլխավոր աղբյուրները, խմբավորել իր շրջապատում տարածված վայրի և մշակովի բույսերը՝</p>	<p>սպառումը, դրանց տարբերությունները, ջրի մաքրման մեխանիկական, ֆիզիկաքիմիական, կենսաբանական պրոցեսների էությունը, ջրամբարների և փոքր լճերի «ծաղկման» գլխավոր պատճառը, բուսական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ուղիները, առանձին կենդանատեսակների որսաարդյունագործական և միջավայրաստեղծ նշանակությունը, կենդանական ռեսուրսների պահպանման և վերականգնման գլխավոր միջոցառումները, կենդանական աշխարհի աղբատացման, վերացման, պատճառները: <b>Կարողանա</b> առաջադրված ուսումնական իրավիճակում <b>հիմնավորել</b> մթնոլորտն աղտոտող ձեռնարկության տեղաբաշխումը: <b>Իմանա</b> բնօգտագործման և բնապահպանության բնագավառում միջազգային համագործակցության ձևերի, միջազգային բնապահպանական կազմակերպությունների ու ծրագրերի բովանդակությունը:</p>	<p>տրել բնական միջավայրի խաթարման առանձնահատկությունները օգտակար հանածոների հանքավայրերի տարբեր եղանակներով շահագործման դեպքում, որոշել իր բնակավայրին մոտ գտնվող որևէ շահագործվող հանքավայրի միջավայրին հասցրած վնասների տեսակները, կենդանական աշխարհի աղբատացման, վերացման, հետևանքները, բույսերի և կենդանիների գենետիկ գենոֆոնդի պահպանման նշանակությունը: <b>Կարողանա</b> կիրառել գիտելիքները անտառօգտագործման և անտառապահպանման գործում:</p>
---	---	---

<p>ըստ կիրառության բնագավառների: <b>Գաղափար ունենա</b> հասարակության հավասարակշռված(կայուն) զարգացման հայեցակարգի հիմնադրույթների մասին:</p>		
<p><b>Իմանա</b> աշխարհի ինքնատիպ բնատնտեսական պայմաններ ունեցող տարածաշրջանների հիմնական առանձնահատկությունները, բնորոշիչները, <b>կարողանա</b> որոշել տարածաշրջանի ու երկրի ինքնատիպության գլխավոր ցուցանիշները:</p>	<p><b>Իմանա</b> ուրբանիզացված, տնտեսական սրընթաց և արձանագրած, լեռնային, չորային (արիդ), ագրարային տարածաշրջաններում հասարակության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները:</p>	<p><b>Կարողանա</b> օգտվելով աշխարհատեղեկատվական համակարգերից, թեմատիկ քարտեզներից, քարտեզասխեմաներից, դիագրամներից և տեղեկատվական այլ աղբյուրներից վերլուծել ինքնատիպ տարածաշրջանների ու երկրների զարգացման հեռանկարները:</p>
<p><b>Ծանոթ լինի</b> մարդկության համամոլորակային հիմնախնդիրների առաջացման գլխավոր պատճառներին:</p>	<p><b>Իմանա</b> հանքային հույժքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների, բնության պահպանության, ժողովրդագրական, պարենային, թույլ զարգացած երկրների հետամնացության վերացման և բնակչության աղքատության հաղթահարման, տարածքային և էթնիկ հակամարտությունների, համաշխարհային օվկիանոսի համամոլորակային հիմնախնդիրների առաջացման պատճառները, կապը համամոլորակային մյուս հիմնախնդիրների հետ, լուծման ուղիները:</p>	<p><b>Գնահատել</b> համամոլորակային հիմնախնդիրների զարգացման(խորացման) և դրանց լուծման համամարդկային ներուժի համալիր փոխառնչությունները:</p>

## ԾՐԱԳԻՐ

### ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*10-րդ դասարան*

(68 ժամ, շաբաթական 2 ժամ)

#### *Ընդհանուր աշխարհագրություն*

**Թեմա - Ընդհանուր աշխարհագրություն» դասընթացի ուսումնասիրության առարկան. նպատակը, խնդիրները, կապը այլ դասընթացների հետ: 3 ժամ**

Աշխարհագրության բոլոր ճյուղերի համար ընդհանուր ուսումնասիրության օբյեկտները, տարածքային կառուցվածքային միավորները և դրանցից յուրաքանչյուրին բնորոշ օրինաչափությունները. համամոլորակային, տարածաշրջանային, տեղական մակարդակներում բնական և հասարակական օբյեկտների ու երևույթների փոփոխության և զարգացման տարածական անհամասեռությունը: Աշխարհագրության ճյուղերի միջև փոխադարձ կապերը, ինտեգրումը մյուս բնական և հասարակական գիտությունների ճյուղերին:

#### *ԻԲԱԺԻՆ - 16 ժամ*

#### **Թեմա - Աշխարհագրական հետազոտության մեթոդներ**

##### *Դաշտային հետազոտության մեթոդներ*

Օբյեկտների և երևույթների անմիջական հետազոտությունները (էքսպեդիցիաներ, ստեղծարար դիտարկումներ, կամերալ մշակումներ):

##### *Քարտեզագրական մեթոդներ*

Քարտեզների կազմումը: Աշխարհագրական քարտեզների հիմնական պրոյեկցիաները, աղավաղումների բնույթը (երկարություններ, անկյուններ, մակերեսներ):

Աշխարհագրական երևույթների և օբյեկտների պատկերման հիմնական մեթոդները: Քարտեզագրական ընդհանրացում(զեներալիզացիա): Տեղագրական քարտեզներ, դրանցում տեղանքի պատկերման առանձնահատկությունները: Գործնական աշխատանքներ տեղագրական քարտեզով:

Աշխարհատեղեկատվական(գեոինֆորմացիոն) համակարգեր, դրանց կիրառական նշանակությունը:

Աշխարհագրական քարտեզների(այդ թվում՝ տեղագրական) նշանակությունը գիտական ուսումնասիրությունների և մարդու առօրյա գործունեության համար: Աշխարհագրական քարտեզները որպես տեղեկատվության աղբյուր:

Պատմական, համեմատական-աշխարհագրական և վիճակագրական մեթոդներ: Բնական և հասարակական երևույթների տարածական փոփոխությունների չափերի վերլուծությունը աշխարհագրության մեջ:

Գործնական աշխատանք:

Կրկնություն:

## ***II ԲԱՇԻՆ - 24 ժամ***

### **Թեմա - Երկրագնդի բնությունը: Աշխարհագրական թաղանթ**

#### ***Արեգակնային համակարգ: Երկրագունդ***

Երկրագնդի առաջացման ժամանակակից վարկածներ: Երկրի ձևի(գեոիդ), չափերի, ներքին կառուցվածքի վերաբերյալ ժամանակակից պատկերացումները: Երկրի մագնիսականությունը: Մագնիսական և աշխարհագրական բևեռներ: Երկրի գրավիտացիոն(ծանրահակ) դաշտը: Երկրի պտույտը իր առանցքի և Արեգակի շուրջը: Երկրագնդի ժամային գոտիները: Տեղական և գոտիական ժամանակ:

Գործնական աշխատանք:

Կրկնություն:

### **Թեմա - Աշխարհագրական թաղանթի ձևավորումը և զարգացումը**

Աշխարհագրական թաղանթի զարգացման փուլերը. երկրաբանական փուլ. երկրակեղևի, մթնոլորտի, ջրոլորտի առաջացումն ու զարգացումը: Կենսաբանական փուլ. օրգանիզմների զարգացումը, դրանց ազդեցությունը աշխարհագրական թաղանթի մյուս ոլորտների բաղադրիչների զարգացման վրա: Երկրաժամանակագրական աղյուսակ: Լեռնային ապարների հասակի որոշման մեթոդները: Աշխարհագրական թաղանթի ոլորտների զարգացումը Պալեոգոյում, Մեզոգոյում ու Կայնոգոյում:

### **Թեմա - Աշխարհագրական թաղանթ. կառուցվածքը, հիմնական հատկանիշները և զարգացման օրինաչափությունները**

Աշխարհագրական թաղանթի ոլորտները. քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ: Դրանց ֆիզիկաքիմիական հատկությունները, դրանց ուղղաձիգ և հորիզոնական (տարածական) կառուցվածքները, յուրահատուկ գործընթացներն ու երևույթները: Աշխարհագրական թաղանթի ոլորտների փոխկապվածությունը և փոխազդեցությունը:

Աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշները, ամբողջականությունը, կառուցվածքայնությունը, ռիթմայնությունը, գոտիականությունը: Աշխարհագրական թաղանթի տարածական անհամասեռությունը պայմանավորող հիմնական բաղադրիչները, գործոնները: Աշխարհագրական գոտիները և բնական զոնաները որպես բնատարածքային համա-

լիրներ(ԲՏՀ), ազոնալ ԲՏՀ-ներ: Նյութերի և էներգիայի շրջապտույտը աշխարհագրական թաղանթում:

Աշխարհագրական թաղանթը որպես երկրագնդի համամոլորակային բնաստարածքային համալիր: Նրա զարգացման օրինաչափությունները: Նյութերի, օդի, ջրի և օրգանիզմների շրջապտույտը աշխարհագրական թաղանթում:

Աշխարհագրական թաղանթում ընթացող պրոցեսների էներգետիկ աղբյուրները, արեգակնային և երկրագնդի ներքին ջերմային էներգիա:

Մարդու առաջացումը և գործունեությունը աշխարհագրական թաղանթում: Երկրագնդի բնակեցումը և յուրացումը մարդու կողմից: Մարդոլորտ: Մարդկային քաղաքակրթությունների զարգացումը: Հին աշխարհ, միջին դարեր, նոր և նորագույն ժամանակներ:

Գործնական աշխատանք: Կրկնություն:

### **III ԲԱԺԻՆ - 12 ժամ**

#### **Թեմա - Աշխարհի քաղաքական բաժանումը**

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորումը, դրա փուլերը: Աշխարհի բաժանումը քաղաքակրթությունների: Աշխարհի պետությունների դասակարգումը ըստ պետական կառուցվածքի, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի: Չարգացած և նոր զարգացող երկրներ:

Աշխարհաքաղաքականություն(գեոպոլիտիկա), հիմնական տեսություններն ու հայեցակարգերը: Աշխարհաքաղաքականության ազդեցությունը միջազգային հաղորդակցության ուղիների տեղաբաշխման վրա: Հայաստանի Հանրապետությունը ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներում:

Գործնական աշխատանք:

Կրկնություն:

#### **Թեմա - Աշխարհի բնակչության աշխարհագրություն - 13 ժամ**

Աշխարհի տարաբնակեցման անհամաչափությունները: Բնակչության թիվը, վերարտադրությունը, կազմը(սեռատարիքային, ռասայական, կրոնական) սոցիալական, ազգային): Աշխատանքային ռեսուրսներ. աշխատունակ և անաշխատունակ բնակչություն: Բնակչության տեղաբաշխումը և խտությունը. արտագաղթ, ներգաղթ: Գյուղական և քաղաքային տարաբնակեցում: Ուրբանիզացիա, դրա ձևերը: Խոշոր ագլոմերացիաները, մեգապոլիսները: Գյուղական տարաբնակեցման ձևերը:

Աշխարհի գլխավոր պատմամշակութային կենտրոնները:

Գործնական աշխատանք:

Կրկնություն:

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## 11-րդ դասարան

(34 ժամ, շաբաթական 1 ժամ)

### Ընդհանուր աշխարհագրություն

#### **ԻԲԱԺԻՆ - 14 ժամ**

##### **Թեմա - Համաշխարհային տնտեսություն**

Համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալները և զարգացման փուլերը: Գիտատեխնիկական հեղափոխությունը և համաշխարհային տնտեսությունը: Աշխատանքի միջազգային բաժանումը և երկրների մասնագիտացումը: Համաշխարհային տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը: Արտադրության տեղաբաշխման գործոնները:

Գործնական աշխատանք: Կրկնություն:

##### **Աշխարհի բնական ռեսուրսների աշխարհագրություն**

Բնական ռեսուրսները, տեսակները և տնտեսական գնահատումը: Ռեսուրսաապահովվածություն: Աշխարհագրական միջավայր:

Երկրագնդի ապահովվածությունը հանքային, հողային, ագրոկլիմայական, ցամաքի ջրային ռեսուրսներ, Համաշխարհային օվկիանոսի, կենսաբանական, տիեզերական, նեկրեացիոն ռեսուրսներով:

Գործնական աշխատանք: Կրկնություն:

##### **Աշխարհի արդյունաբերության աշխարհագրություն**

Աշխարհի արդյունաբերության ընդհանուր բնութագիրը, զարգացման միտումները, ճյուղային կառուցվածքի և առանձին ճյուղերի(վառելիքաէներգետիկ, լեռնահանքային, մետաղաձուլության, մեքենաշինության, քիմիական, անտառային, թեթև) տեղաբաշխման գործոնները, սկզբունքները, մոդելները. տեխնոլոգիական վերազինում, հումքի և աշխատուժի հիմնախնդիր, էկոլոգիական, տնտեսական կապերի գործոններ և այլն:

##### **Աշխարհի գյուղատնտեսության աշխարհագրություն**

Աշխարհի գյուղատնտեսության ճյուղերի(բուսաբուծություն, անասնապահություն, ձկնորսություն) զարգացման միտումները, գլխավոր ուղղությունները, տեղաբաշխման շրջանները: Գյուղատնտեսության ինտենսիվացումը, գյուղատնտեսական հողաբարելավման և ագրոտեխնիկական արդյունավետ միջոցառումների օգտագործումը: Գեներիկորեն փոփոխված(մոդիֆիկացված) բուսական և կենդանական օրգանիզմների տարածման աշխարհագրությունը:

Գործնական աշխատանք: Կրկնություն:

### ***Աշխարհի տրանսպորտի աշխարհագրություն***

Տրանսպորտի զարգացման ժամանակակից ուղղությունները, տրանսպորտային միջոցների կատարելագործումը: Յամաքային, ջրային, օդային տրանսպորտային միջազգային ուղիները: Տրանսպորտային խոշոր հանգույցներ: Տրանսպորտի տարբեր տեսակների զարգացման հեռանկարները:

### ***Միջազգային տնտեսական հարաբերություններ***

Միջազգային առևտուրը որպես միջազգային տնտեսական կապերի հիմնական տեսակ: Ֆինանսավարկային, գիտատեխնիկական, մշակութային փոխհարաբերություններ: Միջազգային զբոսաշրջություն, տուրիստական ծառայությունները, մասնագիտացման տարածաշրջաններն ու երկրները: Տնտեսության միջազգայնացումը, գոբալացումը: Տնտեսական ինտեգրացիա:

Կրկնություն:

## ***ԲԱԺԻՆ II - 15 ժամ***

### ***Թեմա - Բնություն - հասարակություն փոխհարաբերությունները***

Բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը և դրա խախտման պատճառներն ու հետևանքները: Բնօգտագործումը և շրջակա միջավայրի չկանխատեսվող փոփոխությունները: Շրջակա միջավայրի մարդածին աղտոտումը: Աղտոտման աղբյուրները, տեսակները:

Աշխարհագրական թաղանթի ոլորտների օգտագործման և պահպանման առանձնահատկությունները:

Քարոլորտ: Ընդերքի ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ու պահպանումը:

Մթնոլորտ, աղտոտման աղբյուրները, տեսակները, պահպանումն աղտոտումից: Աղտոտման հետևանքները: Թթվային անձրևներ, սմոգ: Օզոնի շերտի էկոլոգիական դերը: «Ջերմոցային էֆեկտի» էությունը: Կլիմայական ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրը:

Ջրոլորտ: Ջրային ռեսուրսներ: Բաշխումը երկրագնդի վրա: Ջրօգտագործման ոլորտները: Ջրային ավազանների աղտոտման աղբյուրները, պահպանման առանձնահատկությունները:

Կենսոլորտ: Ջարգացման և ինքնավերականգնման օրինաչափությունները: Հողային ռեսուրսներ, օգտագործման առանձնահատկությունները, աշխարհագրական տարբերությունները, պահպանումը: Բուսական ռեսուրսներ: Աշխարհագրական տարածումը: Դասակարգումը ըստ կիրառության բնագավառների: Ռացիոնալ օգտագործումը, վերականգնումը, պահպանումը: Կենդանական ռեսուրսներ: Աշխարհագրական տարածումը, դասակարգումը: Կենդանական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, վերականգնումը և պահպանումը: Կենսաբազմազանության (զենոֆոնդի) պահպանման հիմնախնդիրը:

Գործնական աշխատանք: Կրկնություն:



**ԲԱԺԻՆ III - 5 ժամ**

**Թեմա - Համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը**

Հասարակության հավասարակշռված (կայուն) զարգացման հայեցակարգը:  
Համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը: Տնտեսական աճից դեպի  
կայուն զարգացում: Միջազգային համագործակցությունը բնօգտագործման և բնապահ-  
պանության բնագավառում: Միջազգային համագործակցության ձևերը: Բնապահպա-  
նական կազմակերպություններն ու ծրագրերը:

Կրկնություն:

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

12 - րդ դասարան

(34 ժամ, շաբաթական 1 ժամ)

**Ընդհանուր աշխարհագրություն**

## **Թեմա - Աշխարհի ինքնատիպ տարածաշրջաններն ու երկրները, 9 ժամ**

Ներածություն: Հասարակության տարածքային կազմակերպման տարածաշրջանային և համամոլորակային մոդելները, դրա հետևանքով առաջացած հիմնախնդիրները: Աշխարհի ինքնատիպ բնատնտեսական պայմաններ ունեցող շրջանները, դրանցում հասարակության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները:

Ուրբանիզացված տարածաշրջաններ և երկրներ(Արևմտյան Եվրոպա, ԱՄՆ-ի ծովափնյա շրջաններ, Ճապոնիա): Տնտեսական սրընթաց աճ արձանագրած տարածաշրջաններ և երկրներ(Ասիական վագրեր, Չինաստան): Լեռնային տարածաշրջաններ ու երկրներ, զարգացման բնատնտեսական պայմանները, հիմնական առանձնահատկությունները:

Չորային (արիդ) կլիմայական պայմաններով ասիական և աֆրիկյան տարածաշրջանների և երկրների տնտեսության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները: Ագրարային տարածաշրջանների և երկրների զարգացման հիմնախնդիրները:

Արևմտյան Եվրոպան որպես քաղաքական և տնտեսական ինտեգրացիոն գործընթացի տարածաշրջան: Ռուսաստանի Գաշնությունը որպես բնառեսուրսային մեծ ներուժ ունեցող պետություն: ԱՄՆ-ը որպես համաշխարհային քաղաքական և տնտեսական դերակատարում ունեցող երկիր:

Գործնական աշխատանք: Կրկնություն:

## **Թեմա-Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները, 8 ժամ**

Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները, դրանց լուծման ժամանակակից ռազմավարությունները:

Հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների համամոլորակային հիմնախնդիրը<sup>1</sup> :

Բնության պահպանության համամոլորակային հիմնախնդիրը:

Ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդիրը:

Պարենային համամոլորակային հիմնախնդիրը:

---

<sup>1</sup> Բոլոր հիմնախնդիրները ուսումնասիրվում են հետևյալ սխեմայով՝ հիմնախնդրի ելությունը, առաջացման պատճառները, կապը համամոլորակային մյուս հիմնախնդիրների հետ, լուծման ուղիները:

Թույլ զարգացած երկրների հետամնացության վերացման և բնակչության աղքատության հաղթահարման համամոլորակային հիմնախնդիրը:  
Տարածքային և էթնիկ հակամարտությունների հիմնախնդիրը:  
Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրը:  
Գործնական աշխատանք: Ամփոփիչ կրկնություն:

***10-12-րդ դասարանների «Ընդհանուր աշխարհագրություն» դասընթացի թեմատիկ կրկնություն:***

«Աշխարհագրական հետազոտության մեթոդներ», «Երկրագնդի բնությունը: Աշխարհագրական թաղանթ», «Աշխարհի քաղաքական բաժանումը», «Աշխարհի բնակչության աշխարհագրություն» թեմաներ, (9 ժամ)

«Համաշխարհային տնտեսություն», «Բնություն-հասարակություն փոխհարաբերությունները», «Համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը» թեմաներ, (5 ժամ)

«Աշխարհի ինքնատիպ տարածաշրջաններն ու երկրները», «Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները» թեմաներ, (3 ժամ)

**ԾՐԱԳԻՐ**

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*10-րդ դասարան*

**(34 ժամ, շաբաթական 1 ժամ)**

***Ընդհանուր աշխարհագրություն***

Բնագիտամաթեմատիկական հոսքի հարակից առարկայական ուսուցման համար

**Թեմա - Ընդհանուր աշխարհագրություն» դասընթացի ուսումնասիրության առարկան. նպատակը, խնդիրները, կապը այլ դասընթացների հետ: 1 ժամ**

Աշխարհագրության բոլոր ճյուղերի համար ընդհանուր ուսումնասիրության օբյեկտները, տարածքային կառուցվածքային միավորները և դրանցից յուրաքանչյուրին բնորոշ օրինաչափությունները. : Աշխարհագրության ճյուղերի միջև փոխադարձ կապերը :

***I ԲԱԺԻՆ - 8 ժամ***

**Թեմա - Աշխարհագրական հետազոտության մեթոդներ**

***Դաշտային հետազոտության մեթոդներ***

Օբյեկտների և երևույթների անմիջական հետազոտությունները (էքսպեդիցիաներ, ստեղծարար դիտարկումներ, կամերալ մշակումներ):

***Քարտեզագրական մեթոդներ***

Քարտեզների կազմումը: Աշխարհագրական քարտեզների հիմնական պոլյեկցիաները, աղավաղումների բնույթը Աշխարհագրական երևույթների և օբյեկտների պատկերման հիմնական մեթոդները: Տեղագրական քարտեզներ :

Աշխարհատեղեկատվական(գեոինֆորմացիոն) համակարգեր, դրանց կիրառական նշանակությունը:

Աշխարհագրական քարտեզների(այդ թվում` տեղագրական) նշանակությունը գիտական ուսումնասիրությունների և մարդու առօրյա գործունեության համար: Պատմական, համեմատական-աշխարհագրական և վիճակագրական մեթոդներ:

***II ԲԱԺԻՆ - 15 ժամ***

**Թեմա - Երկրագնդի բնությունը: Աշխարհագրական թաղանթ**

***Արեգակնային համակարգ: Երկրագունդ***

Երկրագնդի առաջացման ժամանակակից վարկածներ: Երկրի ձևի(գեոիդ), չափերի, ներքին կառուցվածքի վերաբերյալ ժամանակակից պատկերացումները: Երկրի մագնիսականությունը: Երկրի գրավիտացիոն(ծանրահակ) դաշտը:

### ***Թեմա - Աշխարհագրական թաղանթի ձևավորումը և զարգացումը***

Աշխարհագրական թաղանթի զարգացման փուլերը. երկրաբանական փուլ. երկրակեղևի, մթնոլորտի, ջրոլորտի առաջացումն ու զարգացումը: Կենսաբանական փուլ. օրգանիզմների զարգացումը, դրանց ազդեցությունը աշխարհագրական թաղանթի մյուս ոլորտների բաղադրիչների զարգացման վրա: Երկրաժամանակագրական աղյուսակ:

### ***Թեմա - Աշխարհագրական թաղանթ. կառուցվածքը, հիմնական հատկանիշները և զարգացման օրինաչափությունները***

Աշխարհագրական թաղանթի ոլորտները. քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ: Գրանց ֆիզիկաքիմիական հատկությունները, դրանց ուղղաձիգ և հորիզոնական (տարածական) կառուցվածքները, յուրահատուկ գործընթացներն ու երևույթները: Աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշները, ամբողջականությունը, կառուցվածքայնությունը, ռիթմայնությունը, գոտիականությունը: Նյութերի և էներգիայի շրջապտույտը աշխարհագրական թաղանթում:

Աշխարհագրական թաղանթը որպես երկրագնդի համամոլորակային բնատարածքային համալիր: Նրա զարգացման օրինաչափությունները: Նյութերի, օդի, ջրի և օրգանիզմների շրջապտույտը աշխարհագրական թաղանթում:

Մարդու առաջացումը և գործունեությունը աշխարհագրական թաղանթում: Երկրագնդի բնակեցումը և յուրացումը մարդու կողմից: Մարդոլորտ:

Կրկնություն

### ***III ԲԱԺԻՆ – 5 ժամ***

#### ***Թեմա - Աշխարհի քաղաքական բաժանումը***

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորումը, դրա փուլերը: Աշխարհի բաժանումը քաղաքակրթությունների: Աշխարհի պետությունների դասակարգումը ըստ պետական կառուցվածքի, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի: Զարգացած և նոր զարգացող երկրներ:

Աշխարհաքաղաքականություն(գեոպոլիտիկա), հիմնական տեսություններն ու հայեցակարգերը:

## **Թեմա - Աշխարհի բնակչության աշխարհագրություն - 5 ժամ**

Աշխարհի տարաբնակեցման անհամաչափությունները: Բնակչության թիվը, վերարտադրությունը, կազմը (սեռատարիքային, ռասայական, կրոնական) սոցիալական, ազգային): Աշխատանքային ռեսուրսներ: Բնակչության տեղաբաշխումը և խտությունը. արտագաղթ, ներգաղթ: Գյուղական և քաղաքային տարաբնակեցում: Ուրբանիզացիա, դրա ձևերը: Խոշոր ագլոմերացիաները, մեգապոլիսները:

Կրկնություն:

### **ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

#### **11-րդ դասարան**

**(34 ժամ, շաբաթական 1 ժամ)**

#### **Ընդհանուր աշխարհագրություն**

#### **ԻԲԱԺԻՆ - 9 ժամ**

##### **Թեմա - Համաշխարհային տնտեսություն**

Համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալները և զարգացման փուլերը: Գլխատեխնիկական հեղափոխությունը և համաշխարհային տնտեսությունը: Աշխատանքի միջազգային բաժանումը և երկրների մասնագիտացումը: Համաշխարհային տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը:

##### **Աշխարհի բնական ռեսուրսների աշխարհագրություն**

Բնական ռեսուրսները, տեսակները և տնտեսական գնահատումը: Ռեսուրսաապահովվածություն: Աշխարհագրական միջավայր: Երկրագնդի ապահովվածությունը ռեսուրսներով:

##### **Աշխարհի արդյունաբերության աշխարհագրություն**

Աշխարհի արդյունաբերության ընդհանուր բնութագիրը, զարգացման միտումները, ճյուղային կառուցվածքի և առանձին ճյուղերի(վառելիքաէներգետիկ, լեռնահանքային, մետաղամուտքային, մեքենաշինության, քիմիական, անտառային, թեթև) տեղաբաշխման գործոնները, սկզբունքները, մոդելները :

##### **Աշխարհի գյուղատնտեսության աշխարհագրություն**

Աշխարհի գյուղատնտեսության ճյուղերի(բուսաբուծություն, անասնապահություն, ձկնորսություն) զարգացման միտումները, գլխավոր ուղղությունները, տեղաբաշխման շրջանները: Գյուղատնտեսության ինտենսիվացումը, գյուղատնտեսական հողաբարելավման և ագրոտեխնիկական արդյունավետ միջոցառումների օգտագործումը:

##### **Աշխարհի տրանսպորտի աշխարհագրություն**

Տրանսպորտի զարգացման ժամանակակից ուղղությունները : Տրանսպորտային միջազգային ուղիները: Տրանսպորտային խոշոր հանգույցներ:

### ***Միջազգային տնտեսական հարաբերություններ***

Միջազգային առևտուրը որպես միջազգային տնտեսական կապերի հիմնական տեսակ: Ֆինանսավարկային, գիտատեխնիկական, մշակութային փոխհարաբերություններ: Միջազգային զբոսաշրջություն, տուրիստական ծառայությունները, մասնագիտացման տարածաշրջաններն ու երկրները: Տնտեսության միջազգայնացումը, գլոբալացումը: Տնտեսական ինտեգրացիա:

Կրկնություն:

### ***ԲԱԺԻՆ II – 8 ժամ***

#### **Թեմա - Բնություն - հասարակություն փոխհարաբերությունները**

Բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը և դրա խախտման պատճառներն ու հետևանքները: Բնօգտագործումը և շրջակա միջավայրի չկանխատեսվող փոփոխությունները:

Քարոլորտ: Ընդերքի ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ու պահպանումը:

Մթնոլորտ. աղտոտման աղբյուրները, տեսակները, պահպանումն աղտոտումից: Աղտոտման հետևանքները: Թթվային անձրևներ, սմոգ: Օզոնի շերտի էկոլոգիական դերը: «Ջերմոցային էֆեկտի» էությունը: Կլիմայական ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրը:

Ջրոլորտ: Ջրային ռեսուրսներ: Ջրային ավազանների աղտոտման աղբյուրները, պահպանման առանձնահատկությունները:

Կենսոլորտ: Ջարգացման և ինքնավերականգնման օրինաչափությունները: Հողային ռեսուրսներ, օգտագործման առանձնահատկությունները, աշխարհագրական տարբերությունները, պահպանումը: Բուսական ռեսուրսներ և կենդանական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, վերականգնումը և պահպանումը: Կենսաբազմազանության (գենոֆոնդի) պահպանման հիմնախնդիրը:

Կրկնություն:

### ***ԲԱԺԻՆ III - 3 ժամ***

#### **Թեմա - Համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը**

Հասարակության հավասարակշռված (կայուն) զարգացման հայեցակարգը: Տնտեսական աճից դեպի կայուն զարգացում: Միջազգային համագործակցությունը բնօգտագործման և բնապահպանության բնագավառում:

#### ***Թեմա - Աշխարհի ինքնատիպ տարածաշրջաններն ու երկրները, 7 ժամ***

Ներածություն: Հասարակության տարածքային կազմակերպման տարածաշրջանային և համամոլորակային մոդելները, դրա հետևանքով առաջացած հիմնախնդիրները:

Աշխարհի ինքնատիպ բնատնտեսական պայմաններ ունեցող շրջանները, դրանցում հասարակության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները:

Ուրբանիզացված տարածաշրջաններ և երկրներ(Արևմտյան Եվրոպա, ԱՄՆ-ի ծովափնյա շրջաններ, Մապոնիա): Տնտեսական սրընթաց աճ արձանագրած տարածաշրջաններ և երկրներ(Ասիական վագրեր, Չինաստան): Լեռնային տարածաշրջաններ ու երկրներ, զարգացման բնատնտեսական պայմանները, հիմնական առանձնահատկությունները:

Չորային (արիդ) կլիմայական պայմաններով ասիական և աֆրիկյան տարածաշրջանների և երկրների տնտեսության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները: Ագրարային տարածաշրջանների և երկրների զարգացման հիմնախնդիրները:

Արևմտյան Եվրոպան որպես քաղաքական և տնտեսական ինտեգրացիոն գործընթացի տարածաշրջան: ԱՄՆ-ը որպես համաշխարհային քաղաքական և տնտեսական դերակատարում ունեցող երկիր:

Կրկնություն:

### ***Թեմա-Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները, 7 ժամ***

Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները, դրանց լուծման ժամանակակից ռազմավարությունները:

Հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների համամոլորակային հիմնախնդիրը<sup>2</sup> :

Բնության պահպանության համամոլորակային հիմնախնդիրը:

Ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդիրը:

Պարենային համամոլորակային հիմնախնդիրը:

Տարածքային և էթնիկ հակամարտությունների հիմնախնդիրը:

Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրը:

Ամփոփիչ կրկնություն:

---

<sup>2</sup> Բոլոր հիմնախնդիրները ուսումնասիրվում են հետևյալ սխեմայով՝ հիմնախնդրի ելությունը, առաջացման պատճառները, կապը համամոլորակային մյուս հիմնախնդիրների հետ, լուծման ուղիները:



# ԲՆՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

(բովանդակային միջուկ)

## Ավագ դպրոց

Մարդ-բնություն փոխհարաբերությունների զարգացման պատմական փուլերը:

### Շրջակա բնական միջավայրի համակարգային բնույթը

Բնական միջավայր: Աշխարհագրական միջավայր: Երկրահամակարգ: Կենսոլորտը որպես հատուկ տեսակի երկրահամակարգ: Երկրաբնապահպանություն (գեոէկոլոգիա):

### Բնական ռեսուրսների օգտագործումը և պահպանությունը

Ռացիոնալ բնօգտագործում և բնապահպանություն: Մարդու աշխատանքային գործունեության տարրերը:

Բնական ռեսուրսների դասակարգումը: Բնական ռեսուրսների անհավասար բաշխումը երկրի վրա: Բնական ռեսուրսների օգտագործումը: Բնօգտագործումը՝ ըստ բնական ռեսուրսների տեսակների և ըստ երկրների ու տարածաշրջանների: Ռեսուրսաապահովվածություն: Բնական պայմաններ: Բնական ռեսուրսների և բնական պայմանների գնահատումը: Բնական օբյեկտների և երևույթների կադաստրերը: Բնական միջավայրի բնածին և մարդածին աղտոտումը: Էկոլոգիական հավասարակշռություն: Բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտման հետևանքները: Էկոլոգիական ճգնաժամ: Բնական ռեսուրսները արդի աշխարհաքաղաքական գործընթացներում:

### Քարոլորտի ռեսուրսների օգտագործումը և պահպանումը

Հանքային ռեսուրսների (օգտակար հանածոներ) դասակարգումն ըստ ծագման և օգտագործման բնագավառների: Հանքավայրերի շահագործման եղանակները: Բնական միջավայրի խաթարման առանձնահատկությունները և չափերը օգտակար հանածոների հանքավայրերի տարբեր եղանակներով շահագործման դեպքում: Ընդերքի ռեսուրսների համալիր օգտագործման և պահպանման հիմնախնդիրը. անթափոն արտադրությունների ստեղծում, հանքանյութի ուղեկից օգտակար տարրերի կորզում, բնական և արհեստական տարբեր տեսակի փոխարինիչների կիրառում, շահագործվող հանքավայրերի պահպանությունը:

### Մթնոլորտի (օդային ավազան) պահպանումը

Մթնոլորտի (օդային ավազան) աղտոտման աղբյուրները: Մթնոլորտի աղտոտման հետևանքները: Մթնոլորտի ջերմային աղտոտումը: Օդային զանգվածների շարժումա-

կության մեծացումը: Ջերմոցային էֆեկտ: Օգոնային շերտի էկոլոգիական դերը: «Օգոնային պատռվածքներ», առաջացման պատճառները: Օդը աղտոտող արտադրությունների տեղաբաշխման ազդեցությունը օդային ավազանի վրա: Օդային ավազանը աղտոտումից պահպանելու միջոցներն ու ուղիները:

### **Ջրային ռեսուրսների օգտագործումը և պահպանումը**

Ջրային ռեսուրսների անհավասարաչափ բաշխումը երկրագնդի վրա, դրա էկոլոգիական հետևանքները: Ջրային ռեսուրսների էկոլոգիական, միջավայրաստեղծ, տնտեսական, էներգետիկ նշանակությունը: Ջրային ռեսուրսների սպառումը, քանակական սպառում, որակական սպառում: Ջրային ավազաններն աղտոտող հիմնական աղբյուրները: Ջրամբարների աղտոտման առանձնահատկությունները: Ջրի արհեստական մաքրման մեթոդները: Արդյունաբերական նորագույն տեխնոլոգիաների և համակարգերի կիրառումը ջրային ռեսուրսների պահպանության գործում: Ջրի խնայողաբար օգտագործումը որպես ջրային ռեսուրսների պահպանության կարևոր ուղղություն: Ջրային ռեսուրսները որպես միջազգային առևտրի օբյեկտ:

### **Կենսոլորտի քաղաքիչների օգտագործումը և պահպանությունը**

Հողը որպես գյուղատնտեսության և անտառտնտեսության գլխավոր արտադրամիջոց: Երկրագնդի հողային ֆոնդը, դրա կառուցվածքը: Երկրագնդի բնակչության հողապահովվածության աշխարհագրական տարբերությունները: Հողօգտագործման էքստենսիվ և ինտենսիվ ուղղություններ: Հողային ծածկույթի քայքայման հիմնական պատճառները: Հողերի աղտոտման հիմնական աղբյուրները: Հողերի աղակալումը: Էրոզիայի դեմ պայքարը որպես հողերի պահպանման գլխավոր ուղղություն: Հողաբերելավման և հակաէրոզիոն տարածված միջոցառումները: Հողաբերելավման և հակաէրոզիոն միջոցառումների առանձնահատկությունները տարբեր բնական պայմաններ և տնտեսական զարգացման մակարդակ ունեցող երկրներում (տարածաշրջաններում): Բուսականության դերը աշխարհագրական թաղանթում: Բուսական ռեսուրսների դասակարգումն ըստ կիրառության բնագավառների: Երկրագնդի անտառային ռեսուրսները: Անտառը որպես էկոհամակարգ: Անտառապատ տարածքների կրճատումը և դրանից բխող հետևանքները: Բուսական ռեսուրսների պահպանության կարևորագույն ուղղությունները: Թունաքիմիկատներ: Դրանց կիրառումը բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարում: Բույսերի «Կարմիր գիրքը»:

Կենդանիների դերը աշխարհագրական թաղանթում: Կենդանական ռեսուրսների դասակարգումը: Կենդանական ռեսուրսների պահպանման ու վերականգնման գլխավոր ուղղությունները: Կենսաբազմազանության պահպանումը: Հատուկ պահպանվող տարածքներ: Բնական համակարգերի պահպանումը և օգտագործումը որպես ռացիոնալ բնապահպանության կարևորագույն ուղղություն: Լեռնային լանդշաֆտների պահպանման առանձնահատկությունները:

### **Բնական միջավայրի դիտարկումներն ու վերահսկողությունը**

Բնապահպանական մոնիթորինգի մակարդակները և տեսակները: Երկրագնդի ոլորտների մոնիթորինգը: Բնական միջավայրի որակը: Մարդու առողջությունը: Բնական միջավայրի որակի բարելավման գլխավոր ուղիները:

### **Համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը**

Տնտեսական աճ և կայուն զարգացում: Բնօգտագործման և բնապահպանության միջազգային համագործակցության ձևերը և սկզբունքները: Միջազգային բնապահպանական վեհաժողովներն ու պայմանագրերը, դրանցում Հայաստանի Հանրապետության մասնակցությունը: Միջազգային և տարածաշրջանային բնապահպանական կազմակերպությունները և ծրագրերը:

<b>Ավագ դպրոց</b> <b>Մովորողներին ներկայացվող պահանջները</b> <b>Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ</b>		
<b>Ա խումբ</b> <b>պարտադիր նվազագույն մակարդակ</b>	<b>Բ խումբ</b> <b>միջին մակարդակ</b> <b>(ավելանում են Ա խմբի պահանջներին)</b>	<b>Գ խումբ</b> <b>ցանկալի մակարդակ</b> <b>(ավելանում են Ա և Բ խմբերի պահանջներին)</b>
<p><b>Իմանա</b> մարդ-բնություն փոխհարաբերությունների զարգացման պատմական փուլերը, բնական միջավայր, էկոլոգիական հավասարակշռություն, էկոլոգիական ճգնաժամ, բնօգտագործում, հասկացությունների բովանդակությունը, բնական ռեսուրսների դասակարգումը ըստ սպառման, իր բնակավայրի բնական ռեսուրսների տեսակները և դրանց օգտագործողներին, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտման տեսակները: <b>Կարողանա</b> հիմնավորել արտադրության քանակական աճը որպես հասարակական առաջադիմության գլխավոր ցուցանիշ չհամարվելու արդի տեսակետը:</p>	<p><b>Իմանա</b> աշխարհագրական միջավայր, սահմանային թույլատրելի խտություն (ՄԹԽ), սահմանային թույլատրելի արտանետում (ՄԹԱ), ջերմոցային էֆեկտ, աշխարհագրական (լանդշաֆտային) մոնիթորինգ, բնական միջավայրի որակ հասկացությունների բովանդակությունը, մարդու աշխատանքային գործունեության տարրերի (բուն աշխատանք, աշխատանքի առարկա, աշխատանքի միջոց) բնորոշումները: <b>Կարողանա բերել</b> օրինակներ իր բնակավայրից բնական միջավայրի վրա մարդու ներգործության գլխավոր հետևանքների մասին, որևէ երկրահամակարգի օրինակով բացատրել դրա բաղադրիչներից մեկի փոփոխության ազդեցությունը մյուս բաղադրիչների և ամբողջ համակարգի վրա, հիմնավորել բնության պահ-</p>	<p><b>Իմանա</b> ռացիոնալ և ոչ ռացիոնալ բնօգտագործում, առողջ, անառողջ և էքստրեմալ միջավայր հասկացությունների բովանդակությունը, բնական ռեսուրսների դասակարգումը՝ ըստ օգտագործման եղանակի, բնական ռեսուրսների գնահատման տնտեսական, սոցիալական, էկոլոգիական տեսակները, իր բնակավայրի բնական պայմանների և հասարակական գործունեության միջև առկա կապերը: <b>Կարողանա</b> որևէ բնական ռեսուրսի օրինակով բացատրել դրան այլ ռեսուրսներով փոխարկելիության հնարավորությունները:</p>

	<p>պանության անհրաժեշտությունը, բերել որևէ երկրում ռացիոնալ և ոչ ռացիոնալ բնօգտագործման օրինակներ՝ ըստ բնական ռեսուրսների տեսակների:</p>	
<p><b>Իմանա</b> օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման վերգետնյա (բաց), ստորգետնյա (հանքահորային), ստորջրյա եղանակները, Երկրագնդի ջրային ռեսուրսների բաշխումը և դրանցում քաղցրահամ ջրի բաժինը, ջրի ջերմաստիճանի ազդեցությունը նրա խտության վրա, ջրային ռեսուրսների բաշխումը Երկրագնդի վրա, քաղցրահամ ջրի բաժինը ջրոլորտում, ջրի արհեստական մաքրման ձևերը, ջրոլորտն աղտոտող հիմնական նյութերի ազդեցությունը օրգանիզմների վրա, ջրամբարների և փոքր լճերի «ծաղկման» երևույթը, Համաշխարհային օվկիանոսում վնասակար նօսֆերի կուտակման գլխավոր շրջանները, հողի՝ որպես գյուղատնտեսության և անտառատնտեսության գլխավոր արտադրամիջոցի նշանակությունը, հողերի դեգրադացիայի (քայքայման) գլխավոր պատճառները, հողաբարելավման տարածված միջոցառումները, Երկրագնդի ցամաքի բուսազանգվածը, դրանցում</p>	<p><b>Իմանա</b> բնական ռեսուրսների դասակարգումը՝ ըստ ծագման, բնական ռեսուրսների գնահատումը, մթնոլորտում ածխածնի օքսիդի (CO), ծծմբական գազի (SO<sub>2</sub>) ազոտի օքսիդների (NO, NO<sub>2</sub>) քանակության ավելացման գլխավոր աղբյուրները, կանաչ գոտիների ստեղծման դերը թունավոր արտանետումների նվազեցման և օդային ավազանի պահպանության գործում, ջրային ռեսուրսների քանակական և որակական սպառումը, դրանց տարբերությունները, ջրի մաքրման մեխանիկական, ֆիզիկաքիմիական, կենսաբանական պրոցեսների էությունը, ջրամբարների և փոքր լճերի «ծաղկման» գլխավոր պատճառը, բուսական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ուղիները, առանձին կենդանատեսակների որսաարդյունագործական և</p>	<p><b>Իմանա</b> ընդերքի ռեսուրսների համալիր օգտագործման հիմնախնդրի էությունը: <b>Կարողանա</b> գնահատել մարդկության հանքային (վառելիքային, մետաղային) ռեսուրսներով ապահովվածության աշխարհագրական տարբերությունները, հավաքել տեղեկություններ իր շրջապատը աղտոտող նյութերի վերաբերյալ, բացատրել բնական միջավայրի խաթարման առանձնահատկությունները օգտակար հանածոների հանքավայրերի տարբեր եղանակներով շահագործման դեպքում, որոշել իր բնակավայրին մոտ գտնվող որևէ շահագործվող հանքավայրի միջավայրին հասցրած վնասների տեսակները, ՀՀ ռելիեֆի ազդեցությունը ձեռնարկությունների տեղաբաշխման վրա, ջրային ռեսուրսների միջավայրաստեղծ, էկոլոգիական նշանակությունը հետևանքները իր շրջանի «ՀՀ բույսերի կարմիր գրքում» գրանցված բուսատե-</p>

<p>անտառների բաժինը, բուսական ռեսուրսների վերականգնման հիմնական ուղղությունները, բույսերի միջավայրատեղծ, էկոլոգիական նշանակությունը, իր շրջակա տարածքի անտառների (նաև արհեստական) գերակշռող ծառատեսակները, ՀՀ կարմիր գրքում գրանցված իր շրջանի կենդանատեսակները, բնության հատուկ պահպանվող տարածքների տիպերը, աշխարհի և ՀՀ խոշոր պետական արգելոցները և ազգային պարկերը, բնօգտագործման և բնապահպանության միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունները, բնապահպանական բնույթի համամոլորակային հիմնախնդիրներ: <b>Կարողանա քվարկել</b> համաշխարհային օվկիանոսի աղտոտման գլխավոր աղբյուրները, <b>ներկայացնել</b> իր շրջանի հողօգտագործման (ինտենսիվ և էքստենսիվ) ուղիները, <b>խմբավորել</b> իր շրջապատում տարածված վայրի և մշակովի բույսերը՝ ըստ կիրառության բնագավառների, քարտեզի վրա <b>ցույց տալ</b> աշխարհի և ՀՀ խոշոր պետական արգելոցները և ազգային պարկերը, <b>ներկայացնել</b> առաջարկություններ՝ ուղղված իր բնակավայրի շրջակա միջավայրի պահպանության հարցերին:</p>	<p>միջավայրատեղծ նշանակությունը, կենդանական ռեսուրսների պահպանման և վերականգնման գլխավոր միջոցառումները, կենդանական աշխարհի աղքատացման, վերացման, պատճառները, բնության հատուկ պահպանվող տարածքների տիպերի (արգելոց, արգելավայր, ազգային պարկ, բնության հուշարձան) տարբերությունները, բնապահպանական բնույթի համամոլորակային հիմնախնդիրների բովանդակությունը: <b>Կարողանա</b> առաջադրված ուսումնական իրավիճակում <b>հիմնավորել</b> մթնոլորտն աղտոտող ձեռնարկության տեղաբաշխումը, իր շրջակա տարածքում <b>առանձնացնել</b> բնական օբյեկտներ, որոնք կարող են համարվել բնության հուշարձաններ:</p>	<p>ասկները, նյութի և էներգիայի շրջապտույտը կենսոլորտում սննդառության շղթայի միջոցով, կենդանական աշխարհի աղքատացման, վերացման, հետևանքները, բույսերի և կենդանիների զենետիկ գենոֆոնդի պահպանման նշանակությունը, լեռնային լանդշաֆտների պահպանման առանձնահատկությունները՝ կախված նյութի կուտակման և միգրացիայի բնույթից, համաշխարհային բնապահպանական նոր ռազմավարության՝ «տնտեսական աճից դեպի կայուն զարգացում» մոտեցումը, համամոլորակային հիմնախնդիրների փոխառնչությունները: <b>Կարողանա կիրառել</b> գիտելիքները անտառօգտագործման և անտառապահպանման գործում:</p>
---	--	---

## ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՍՏԱԿԱՐԳ

Ներկայացվող պահանջները արտահայտվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով:

Բնօգտագործման և բնապահպանության ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է՝

- Գիտակցի բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման անհրաժեշտությունը,
- գիտակցի իր բնակավայրի բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության գործում սեփական մասնակցության կարևորությունը,
- գիտակցի բնության նկատմամբ համապատասխան վերաբերմունք ձևավորող տեղեկատվության տարածման մեջ սեփական մասնակցության և քաղաքացիական դիրքորոշման արտահայտման կարևորությունը,
- գիտակցի բնության նկատմամբ սպառողական մոտեցումից հրաժարվելու և «տնտեսական աճի» արդի արատավոր մոտեցումներից դեպի կայուն զարգացման հայեցակարգին անցնելու հրամայականը,
- գնահատի իր շրջակա միջավայրի որակը և այդ առումով ձևավորի համապատասխան վերաբերմունք,
- գիտակցի համամոլորակային բնապահպանական խնդիրների լուծման գործում մարդկության ընդհանուր ջանքերի միավորման և դրանում յուրաքանչյուրի մասնակցության կարևորությունը:

## ԾՐԱԳԻՐ

### ԲՆՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

#### 10-րդ դասարան

#### Շաբաթական`1 ժամ, (ընդամենը` 34 ժամ, որից 2 ժամ` պահուստային)

##### **Թեմա - Մարդ-բնություն փոխհարաբերությունները, 4 ժամ**

##### **Թեմայի բովանդակությունը**

Ներածություն. դասընթացի նպատակը, բովանդակությունը: Երկրի աշխարհագրական թաղանթը, նրա ոլորտները որպես մարդու շրջակա միջավայր: Մարդ-բնություն հարաբերությունների փոփոխությունները պատմական զարգացման ընթացքում: Բնօգտագործումը և մարդկային հասարակության արդի զարգացումը:

Շրջակա միջավայրի համակարգային բնույթը: Աշխարհագրական միջավայր: Շրջակա միջավայրի բաղադրիչների փոխալայմանավորվածությունը: Երկրահամակարգ: Բնական միջավայրի ինքնավերականգնման կարողությունը: Էկոլոգիական հավասարակշռություն, էկոլոգիական ճգնաժամ: Բնական միջավայրի պահպանությունը որպես մարդկության համամոլորակային հիմնախնդիր:

##### **Թեմա - Բնական ռեսուրսների օգտագործումը և պահպանությունը, 8 ժամ**

##### **Թեմայի բովանդակությունը**

Բնական ռեսուրսների օգտագործում (բնօգտագործում) և բնական միջավայրի պահպանություն (բնապահպանություն) հասկացությունները: Ռացիոնալ և ոչ ռացիոնալ բնօգտագործում:

Բնական ռեսուրսներ և բնական պայմաններ: Բնական ռեսուրսների դասակարգումն ըստ ծագման, սպառման հնարավորության և փոխարկելիության: Բնական ռեսուրսների կադաստրը: Բնության տարրերն ու երևույթները որպես աշխատանքի առարկա և միջոց: Բնական ռեսուրսների գնահատումը, գնահատման տեսակները, չափման միավորները: Մարդկային հասարակության ռեսուրսաապահովվածությունը, աշխարհագրական տարբերությունները:

Կրկնություն:

##### **Թեմա-Աշխարհագրական թաղանթի բնածին ոլորտների օգտագործումն ու պահպանությունը, 20 ժամ**

##### **Թեմայի բովանդակությունը**

Բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը և դրա խախտման պատճառներն ու հետևանքները: Բնօգտագործումը և շրջակա միջավայրի չկան-



խատեսվող փոփոխությունները: Շրջակա միջավայրի մարդածին աղտոտումը: Աղտոտման աղբյուրները, տեսակները:

Աշխարհագրական թաղանթի ոլորտների օգտագործման և պահպանման առանձնահատկությունները:

Քարոլորտ: Ընդերքի ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ու պահպանումը:

Մթնոլորտ. աղտոտման աղբյուրները, տեսակները, պահպանումն աղտոտումից: Աղտոտման հետևանքները: Թթվային անձրևներ, սնոգ: Օզոնի շերտի էկոլոգիական դերը: «Ջերմոցային էֆեկտի» էությունը:

Ջրոլորտ: Ջրային ռեսուրսներ: Բաշխումը երկրագնդի վրա: Ջրօգտագործման ոլորտները: Ջրային ավազանների աղտոտման աղբյուրները, պահպանման առանձնահատկությունները:

Գործնական աշխատանք: Ջրավազաններ և մթնոլորտ արտանետված գազերի և նյութերի Սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) և Սահմանային թույլատրելի խտությունների (ՄԹԽ) որոշումը:

Կենսոլորտ: Ջարգացման և ինքնավերականգնման օրինաչափությունները: Հողային ռեսուրսներ. օգտագործման առանձնահատկությունները, աշխարհագրական տարբերությունները, պահպանումը: Բուսական ռեսուրսներ: Աշխարհագրական տարածումը: Գասակարգումը ըստ կիրառության բնագավառների: Ռացիոնալ օգտագործումը, վերականգնումը, պահպանումը: Կենդանական ռեսուրսներ: Աշխարհագրական տարածումը, դասակարգումը: Կենդանական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, վերականգնումը և պահպանումը: Կենսաբազմազանության (գենոֆոնդի) պահպանման հիմնախնդիրը: Կրկնություն:

# ԲՆՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## 11-րդ դասարան

### Շարաքական՝ 1 ժամ, (ընդամենը՝ 34 ժամ)

#### ***Թեմա-Բնական միջավայրի դիտարկումներն ու վերահսկողությունը, 11 ժամ***

##### ***Թեմայի բովանդակությունը***

Բնական լանդշաֆտների պահպանումը, բարելավումը և կառավարումը, աշխարհագրական առանձնահատկությունները: Լեռնային շրջանների բնօգտագործման առանձնահատկությունները:

Բնական միջավայրի դիտարկումների և վերահսկողության համակարգերը: Աշխարհագրական մոնիթորինգ: Բնական աղետներ, դրանց էկոլոգիական հետևանքները: Էկոլոգիական վթարներ, էկոլոգիական ռիսկ, էկոլոգիական անվտանգություն: Բնական միջավայրի վիճակը որպես կյանքի որակի չափանիշ: Գեներտիկորեն փոփոխված օրգանիզմներ, դրանց հարմարվածությունը շրջակա միջավայրի պայմաններին: Գեներտիկորեն փոփոխված սննդամթերք, դրա ապրանքանիշը:

Գործնական աշխատանք «Իմ շրջակա միջավայրի աղտոտման պատճառները և հետևանքները»: Կրկնություն:

#### ***Թեմա - Համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը, 5 ժամ***

##### ***Թեմայի բովանդակությունը***

Հասարակության հավասարակշռված (կայուն) զարգացման հայեցակարգը: Համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը: Տնտեսական աճից դեպի կայուն զարգացում: Միջազգային համագործակցությունը բնօգտագործման և բնապահպանության բնագավառում: Միջազգային համագործակցության ձևերը: Բնապահպանական կազմակերպություններն ու ծրագրերը:

#### ***Թեմա - ՀՀ բնօգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները, 11 ժամ***

##### ***Թեմայի բովանդակությունը***

Բնապահպանության հրատապությունը ՀՀ-ում: ՀՀ ընդերքի օգտագործումը և պահպանությունը: Օդային ավազանի աղտոտվածությունը և պահպանությունը: Ջրային ավազանների օգտագործումը և պահպանումը: Սևանա լճի ռեսուրսների օգտագործման և պահպանության հիմնախնդիրը: Հողային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և պահպանումը: Բուսական և կենդանական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և պահպանումը: ՀՀ լանդշաֆտների օգտագործումն ու պահպանումը: ՀՀ Կարմիր գրքերը: Հատուկ պահպանման տարածքները. ազգային պարկեր, արգելոցներ, արգելավայրեր:

ՀՀ բնապահպանական օրենսդրությունը: Պետության և քաղաքացիների պարտականությունները բնօգտագործման և բնապահպանության բնագավառում: ՀՀ բնապահպանական միջազգային պարտավորությունները: Կրկնություն:

***Թեմա - Բնապահպանական համամոլորակային հիմնախնդիրները, 5 ժամ  
Թեմայի բովանդակությունը***

Բնապահպանական համամոլորակային հիմնախնդրի էությունը: Բնապահպանական հիմնախնդիրների կապը միմյանց և համամոլորակային այլ հիմնախնդիրների հետ:

Հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների համամոլորակային հիմնախնդիրը, դրսևորման աշխարհագրական տարբերությունները:

Կլիմայի համամոլորակային տաքացման հիմնախնդիրը, աշխարհագրական հետևանքները: Քաղցրահամ ջրի հիմնախնդիրը: Կենսաբազմազանության պահպանման հիմնախնդիրը: Անապատացման համամոլորակային հիմնախնդիրը:

Կրկնություն:

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ավագ դպրոցի խորացված ուսուցման ծրագիր

### Բացատրագիր

Ավագ դպրոցի աշխարհագրության խորացված ուսուցման ծրագիրը ուղղված է հիմնական դպրոցի «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկաների ծրագրերի հիման վրա սովորողների աշխարհագրական մտածողության զարգացմանը, գիտելիքների, կարողությունների, հմտությունների խորացված ուսուցմանն ու նախասիրություններից բխող առանձին բովանդակային ուղղությունների լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացմանը: Աշխարհագրության խորացված ուսուցման ծրագրի հիմնական նպատակներից է սովորողների մասնագիտական նախասիրությունների բավարարումը և նրանց հետագա մասնագիտական կրթության (հատկապես աշխարհագրական, տնտեսագիտական և քաղաքագիտական մասնագիտությունների) նախապատրաստումը: Ծրագրի թեմատիկ յուրաքանչյուր բաժին ներառում է հիմնական դպրոցում ուսումնասիրված աշխարհագրության տարբեր դասընթացների բովանդակային բաղադրիչների համակարգված բովանդակությունը գիտելիքների, կարողությունների, հմտությունների պարուրած խորացման միջոցով:

«Աշխարհագրական գիտության առարկան և խնդիրները» բաժնում ներկայացված է աշխարհագրության ճյուղային կառուցվածքը, յուրաքանչյուր ճյուղի (այդ թվում՝ ընդհանուր աշխարհագրության) ուսումնասիրության առարկան, խնդիրները:

«Քարտեզագրություն» բաժինը ամփոփում է հիմնական դպրոցի աշխարհագրության տարբեր դասընթացից ստացած գիտելիքները, զարգացնում սովորողների տեղագրական քարտեզներով աշխատելու հմտությունները:

«Երկրի ձևը, մեծությունը, շարժումը» բաժնում քննարկվում են Երկրի առաջացման վարկածներ, նրա ձևի, չափերի վերաբերյալ տեղեկություններ, Երկրի մագնիսականության ու գրավիտացիոն դաշտի բնութագրիչները, ինչպես նաև Երկրի իր առանցքի և Արեգակի շուրջը պտույտի հետևանքները:

«Աշխարհագրական թաղանթը և դրա ստորաբաժանումները» բաժնում ներկայացված են աշխարհագրական թաղանթի կառուցվածքը, հատկանիշները, դրանում նյութերի և էներգիայի շրջապտույտը:

«Քարտուրտ», «Ջրուրտ», «Մթնոլորտ», «Կենոսոլորտ» բաժիններում քննարկվում են յուրաքանչյուր ոլորտի կառուցվածքային միավորները, դրանց փոխառնչությունները, այնտեղ դիտվող բնական երևույթները:

«Մայրցամաքներ և օվկիանոսներ» բաժնում բնութագրվում են մայրցամաքների ու օվկիանոսների երկրաբանական առանձնահատկությունները, մակերևույթի խոշոր ձևերը, կլիման, մայրցամաքների ներքին ջրերը, օրգանական աշխարհի առանձնահատկությունները (մայրցամաքներում առանձնացված բնատարածքային համալիրները՝ բնական զոնաները):

«Աշխարհի քաղաքական քարտեզը և բնակչությունը» բաժնում քննարկվում են աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորումը, «աշխարհաքաղաքականության» էությունը, աշխարհի բնակչության քանակական և որակական ցուցանիշների, բնակչության տեղաբաշխման ու տարաբնակեցման ժամանակակից առանձնահատկությունները:

«Համաշխարհային տնտեսությունը» բաժինը ներկայացնում է աշխարհի տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը, առանձին ճյուղերի (ենթաճյուղերի) տեղաբաշխման, զարգացման առանձնահատկությունները:

«Աշխարհի տարածաշրջանների ու պետությունների աշխարհագրական տեսություն» բաժնում ուսումնասիրվում են տարածաշրջանների ու երկրների համալիր աշխարհագրական բնութագիրը: «Աշխարհի ինքնատիպ տարածաշրջանները և երկրները» բաժնում քննարկվում է բնատնտեսական յուրահատուկ պայմաններ ունեցող, ուրբանիզացված, տնտեսական աճ արձանագրած տարածաշրջանների, երկրների աշխարհագրությունը: «Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները» բաժնում ներկայացվում է ժամանակակից ժողովրդագրական, տնտեսական, քաղաքական, սոցիալական, էկոլոգիական ուղղվածության արդիական հիմնախնդիրները:

«Հայաստան» բաժինը ընդգրկում է Հայկական լեռնաշխարհի բնության, Հայաստանի Հանրապետության բնության, բնակչության, տնտեսության կառուցվածքային միավորների(օբյեկտներ, տարրեր) բնութագիրը, տարածքային կառուցվածքը:

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ավագ դպրոցի խորացված ուսուցման ծրագիր

*Քովանդակային միջուկ*

*(ավագ դպրոց)*

### ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխարհագրության ճյուղերը և դրանց փոխադարձ կապը, աշխարհագրության կապը մյուս գիտությունների հետ: Աշխարհագրության բոլոր ճյուղերի համար ընդհանուր ուսումնասիրության օբյեկտները, տարածքային կառուցվածքային միավորները:

Աշխարհագրության արդի խնդիրները և գործնական նշանակությունը:

### ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գաղափար հորիզոնի և դրա կողմերի մասին: Տեղանքում կողմնորոշվելու եղանակները: Ազիմուտ: Մասշտաբ, դրա տեսակներն ու գործնական նշանակությունը:

Հատակագիծ և քարտեզ: Գլոբուս: Աստիճանացանցը և դրա տարրերը:

Աշխարհագրական լայնություն և երկայնություն: Քարտեզի վրա կետի աշխարհագրական կոորդինատները որոշելը:

Քարտեզների և գլոբուսների մասշտաբները: Աշխարհագրական քարտեզների տարբերակումն ըստ տարածքի ընդգրկման, բովանդակության: Տեղանքի հատակագիծ: Տեղագրական քարտեզ: Քարտեզի պայմանական նշանները:

Քարտեզի նշանակությունը մարդու գործունեության մեջ:

### ԵՐԿՐԻ ՁԵՎԸ, ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՐԺՈՒՄԸ

Երկրի ձևն ու չափերը: Երկրի ձևի մասին պատկերացումներն անցյալում: Երկրագնդի առաջացումը: Երկրի ձևը(գեոիդ), չափերը, ներքին կառուցվածքը: Երկրի մագնիսականությունը: Երկրի գրավիտացիոն(ծանրահակ) դաշտը:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների նշանակությունը: Երկրի օրական պտույտը և դրա աշխարհագրական նշանակությունը: Երկրի տարեկան պտույտը (շարժումը) և դրա աշխարհագրական հետևանքները: Տարվա եղանակների հերթափոխությունը: Ժամային գոտիներ:

### ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆՔԸ ԵՎ ԴՐԱ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Աշխարհագրական թաղանթի ոլորտներն ու դրանց փոխադարձ կապը:

Հասկացություն աշխարհագրական թաղանթի մասին, դրա բաղադրամասերը:

Աշխարհագրական միջավայր: Մարդու դերը աշխարհագրական միջավայրում:

Աշխարհագրական թաղանթի զարգացման փուլերը, երկրաժամանակագրական աղյուսակ: Աշխարհագրական թաղանթի ոլորտների զարգացումը, կառուցվածքը, հիմնական հատկանիշները և զարգացման օրինաչափությունները:

Աշխարհագրական թաղանթի ամբողջականությունը, կառուցվածքայնությունը, ռիթմայնությունը, գոտիականությունը: Նյութերի(օդի, ջրի և օրգանիզմների շրջապատույտը աշխարհագրական թաղանթում) և էներգիայի շրջապատույտը աշխարհագրական թաղանթում:

Մարդու առաջացումը և գործունեությունը աշխարհագրական թաղանթում:

### **Երկրագնդի բնական զոնաները**

Չոնաների հերթափոխությունն ըստ աշխարհագրական լայնության և ծովի մակարդակից ունեցած բարձրության: Լայնակի զոնայականություն: Հասարակածային խոնավ մշտադալար անտառներ ու սավաննաներ, անապատներ և կիսաանապատներ, տափաստաններ, բարեխառն գոտու անտառային, անտառատունդրայի և տունդրայի, արկտիկական անապատների զոնաների բնութագիրը:

### **ՔԱՐՈԼՈՐՏ**

Երկրագնդի ներքին կառուցվածքը: Երկրակեղևը և դրա կառուցվածքը: Երկրակեղևը կազմող ապարները: Պլատֆորմներ և գեոսինկլինալներ: Մայրցամաքներ և օվկիանոսներ:

Երկրի մակերևույթը փոփոխող ներքին (ներծին) և արտաքին (արտածին) ուժերը:

Հրաբուխներ և երկրաշարժեր, դրանց տարածման շրջանները: Հրաբուխների դերը ռելիեֆագոյացման մեջ:

Հողմահարություն: Քամու, հոսող ջրերի, սառցադաշտերի, ծովի ալեբախության աշխատանքը և դերը ռելիեֆի ձևավորման գործում:

Երկրի մակերևույթի ձևերը. հարթավայրեր (ցածրավայրեր, դաշտավայրեր, բարձրավայրեր, սարահարթեր), բլուրներ, լեռներ, լեռնաշղթաներ, լեռնազանգվածներ, լեռնաշխարհներ: Յամաքի մակերևույթի բացարձակ և հարաբերական բարձրությունը: Լեռներ: Լեռների դասակարգումն ըստ բարձրության, հասակի և կառուցվածքի: Ռելիեֆի ազդեցությունը մարդու տնտեսական գործունեության վրա:

### **ՋՐՈԼՈՐՏ**

Գեոգրաֆիկ ջրաբաժանի մասին: Ջրաբաժանի բաղադրամասերը: Ջրի մեծ և փոքր շրջապատույտները, դրանց պատճառներն ու հետևանքները: Համաշխարհային օվկիանոսը և դրա մասերը (օվկիանոսներ, ծովեր, ծովածոցեր, նեղուցներ): Օվկիանոսի հատակի ռելիեֆը, հատակային նստվածքները: Օվկիանոսի ջրի ջերմությունը, աղիությունը: Սառցային երևույթներ: Ջրի շարժումը. օվկիանոսային հոսանքներ, ալիքներ, մակընթացություն և տեղատվություն, ցունամի:

Կղզիներ և թերակղզիներ, դրանց դասակարգումն ըստ ծագման (առաջացման պայմանների):

Համաշխարհային օվկիանոսի բուսական և կենդանական աշխարհը, հանքային հարստությունները: Ծովերի տնտեսական նշանակությունը:

Գետը և դրա մասերը: Գետերի սնումն ու ռեժիմը: Գետերի աշխատանքը: Գետի ավազան և ջրբաժան: Գետի անկում, թեքություն, ծախս, հոսք: Գետերի օգտագործումը և վերափոխումը: Գետերի ջրի մաքրության պահպանումը:

Լճեր, ճահիճներ և սառցադաշտեր, դրանց տիպերը, տարածման շրջաններն ու տնտեսական նշանակությունը:

Ստորերկրյա ջրեր, դրանց առաջացումն ու օգտագործումը: Աղբյուրներ: Գեյզերներ: Ջրոլորտի պահպանման խնդիրները:

## **ՄԹՆՈԼՈՐՏ**

Գաղափար մթնոլորտի մասին, մթնոլորտի նշանակությունը:

Արեգակնային ճառագայթում (ռադիացիա): Մթնոլորտի տաքանալը: Օդի ջերմաստիճանի չափումը: Ջերմաստիճանի օրական և տարեկան ընթացքը: Օդի ջերմաստիճանի փոփոխությունն ըստ աշխարհագրական լայնության և ծովի մակարդակից ունեցած բարձրության:

Մթնոլորտային ճնշում: Ցիկլոններ և անտիցիկլոններ: Օդային զանգվածներ:

Մթնոլորտային տեղումներ, տեղումների քանակի չափումը: Տեղումների բաշխումը երկրագնդի վրա:

«Եղանակ» և «կլիմա» հասկացությունները: Եղանակի դիտումներ: Կլիմայի կախվածությունը վայրի աշխարհագրական լայնությունից, ծովի մոտիկությունից, ծովային հոսանքներից, տեղանքի բարձրությունից և լեռնալանջերի դիրքադրությունից: Քամիների առաջացումը և տեսակները (գեփյուռ, լեռնահովտային քամիներ, մուսսոն, պասսատ): Եղանակի և կլիմայի ուսումնասիրման նշանակությունը տնտեսության համար: Երկրագնդի կլիմայական գոտիները և կլիմայի տիպերը:

Մթնոլորտի պահպանման հիմնախնդիրը:

## **ԿԵՆՍՈԼՈՐՏ**

Կենսոլորտ, դրա բաղադրիչները: Կենդանի օրգանիզմների կապը շրջակա միջավայրի հետ, բնորոշ հատկանիշները, բնակեցման վայրերը:

Բույսերի և կենդանիների բազմազանությունը, դերը կենսոլորտում:

Հող. առաջացումը, կազմը, պահպանությունը: Օրգանիզմների փոխադարձ կապը բնական համակեցություններում:

Բնատարածքային համալիր: Մարդը կենսոլորտի բաղադրիչ և նրա դերը կենսոլորտում:

## **ՍԱՅՐՑԱՄԱՔՆԵՐ ԵՎ ՕՎԿԻԱՆՈՄՆԵՐ**

Եվրասիայի դիրքը, ավիագիծը, ռելիեֆը և օգտակար հանածոները:

Եվրասիայի կլիման, գետերն ու լճերը: Եվրասիայի բնական զոնաները: Եվրասիայի ենթացամաքները, տարածաշրջանները:

Աֆրիկայի դիրքը, ավիագիծը, մակերևույթը և օգտակար հանածոները:



Աֆրիկայի կլիման, գետերն ու լճերը: Աֆրիկայի բնական զոնաները: Աֆրիկայի ենթացամաքները, տարածաշրջանները:

Հյուսիսային Ամերիկայի դիրքը, ափագիծը, մակերևույթը և օգտակար հանածոները: Հյուսիսային Ամերիկայի կլիման, գետերն ու լճերը: Հյուսիսային Ամերիկայի ենթացամաքները, տարածաշրջանները:

Հարավային Ամերիկայի դիրքը, ափագիծը, մակերևույթը և օգտակար հանածոները: Հարավային Ամերիկայի կլիման, գետերն ու լճերը: Հարավային Ամերիկայի բնական զոնաները: Հարավային Ամերիկայի ենթացամաքները, տարածաշրջանները:

Ավստրալիայի ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը: Ավստրալիայի ենթացամաքները, տարածաշրջանները:

Անտարկտիդայի հայտնագործումը և ժամանակակից ուսումնասիրությունները:

Կլիման, բուսական և կենդանական աշխարհը:

Ատլանտյան, Խաղաղ, Հնդկական, Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսների հատակի ռելիեֆի, կլիմայի, ջրի ջերմության, աղիության, օվկիանոսային հոսանքների ու օրգանական աշխարհի բնութագիրը:

## **ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ**

Աշխարհի քաղաքական քարտեզը: Ձևավորման փուլերը: Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի, Հյուսիսային Ամերիկայի, Հարավային Ամերիկայի քաղաքական քարտեզը:

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորումը, դրա փուլերը: Աշխարհի պետությունների դասակարգումը ըստ պետական կառուցվածքի, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի:

Աշխարհաքաղաքականություն(գեոպոլիտիկա), հիմնական տեսություններն ու հայեցակարգերը: Աշխարհաքաղաքականության ազդեցությունը միջազգային հաղորդակցության ուղիների տեղաբաշխման վրա: Հայաստանի Հանրապետությունը ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներում:

Աշխարհի բնակչությունը: Բնակչության թիվը, վերարտադրությունը: Սեխանիկական շարժը: Բնակչության կազմը: Բնակչության տեղաբաշխումն աշխարհում: Բնակչության կուտակումների գլխավոր արեալները: Ուրբանիզացիա, դրա գլխավոր հատկանիշները: Քաղաքային տարաբնակեցում: Աշխարհի խոշորագույն քաղաքային ագլոմերացիաները: Գյուղական տարաբնակեցում:

## **ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Հասկացություն համաշխարհային տնտեսության մասին:

Համաշխարհային տնտեսության ձևավորումը և զարգացումը: Գլխատեխնիկական հեղափոխության ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա:

Համաշխարհային բնական ռեսուրսներ: Հանքային ռեսուրսներ: Հողային ռեսուրսներ: Ջրային ռեսուրսներ. քաղցրահամ ջրի ռեսուրսները: Կենսաբանական ռեսուրսներ: Կլիմայական ռեսուրսներ: Համաշխարհային օվկիանոսի ռեսուրսներ:

Համաշխարհային տնտեսության ընդհանուր բնութագիրը: Արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, դրանց ճյուղային կազմն ու տեղաբաշխումը: Տրանսպորտ: Տրանսպորտի գլխավոր տեսակները: Գլխավոր ծովային ուղիներն ու խոշոր նավահանգիստները:

Աշխարհի արդյունաբերության, զարգացման միտումները, ճյուղային կառուցվածքի և առանձին ճյուղերի տեղաբաշխման գործոնները, սկզբունքները, մոդելները:

Աշխարհի գյուղատնտեսության ճյուղերի(բուսաբուծություն, անասնապահություն, ձկնորսություն) զարգացման միտումները, գլխավոր ուղղությունները, տեղաբաշխման շրջանները:

Տրանսպորտի զարգացման ժամանակակից ուղղությունները: Յամաքային, ջրային, օդային տրանսպորտային միջազգային ուղիները:

Միջազգային առևտուր: Ֆինանսավարկային, գիտատեխնիկական, մշակութային փոխհարաբերություններ: Միջազգային զբոսաշրջություն: Տնտեսության միջազգայնացումը. գլոբալացումը: Տնտեսական ինտեգրացիա:

Միջազգային տնտեսական կապերը:

## **ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՐ- ՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

*«Աշխարհի տարածաշրջանները և պետությունները» բովանդակային ուղղության շրջանակում ներառված են աշխարհամասերի (բացառությամբ Անտարկտիկա աշխարհամասի) 13 տարածաշրջան և 17 պետություն:*

### **Տարածաշրջանի աշխարհագրական բնութագիրը տրվում է հետևյալ սխեմայով.**

- Աշխարհագրական դիրքը, սահմանները:
- Կազմը և քաղաքական քարտեզը, տարածաշրջանի աշխարհագրական առանձնահատկությունները:
- Բնական պայմանների և ռեսուրսների ընդհանուր բնութագիրը:
- Բնակչությունը, թիվը, շարժը, կազմը, տեղաբաշխման պատկերը:
- Տարածաշրջանի տնտեսության ընդհանուր գծերը, առանձնահատկությունները, տեղը համաշխարհային տնտեսության մեջ:
- Տարածաշրջանի հատկանշական հիմնախնդիրները:

**Պետության աշխարհագրական բնութագիրը տրվում է հետևյալ սխեմայով.**

- Աշխարհագրական դիրքը, սահմանները, չափերը, պետական կարգը, վարչատարածքային բաժանումը,
- Բնական պայմանների և ռեսուրսների ընդհանուր բնութագիրը, դրանց տնտեսական նշանակությունը
- Բնակչությունը, բնակչության թիվը, բնական և մեխանիկական շարժերը, բնակչության կազմը, տեղաբաշխումը, ուրբանիզացիան, աշխատանքային ռեսուրսները,
- Տնտեսությունը. տնտեսության գլխավոր ճյուղերի բնութագիրը, երկրի արտաքին տնտեսական կապերը,
- Տնտեսության տարածքային կազմակերպումը:

**ԵՎՐԱՄԻԱ**

**Եվրոպա**

- Արևելյան Եվրոպա: Ռուսաստանի Գաշնություն: Ուկրաինա:
- Հարավային Եվրոպա: Իտալիա:
- Արևմտյան Եվրոպա: Գերմանիա: Ֆրանսիա: Մեծ Բրիտանիա
- Հյուսիսային Եվրոպա

**Ասիա**

- Կենտրոնական Ասիա
- Հարավ-Արևմտյան Ասիա: Վրաստան: Ադրբեջան: Թուրքիա: Իրան
- Հարավային Ասիա: Հնդկաստան:
- Հարավ-Արևելյան Ասիա:
- Արևելյան Ասիա: Չինաստան: Ճապոնիա

**ԱՖՐԻԿԱ**

- Եգիպտոս: Հարավաֆրիկյան Հանրապետություն:

**ԱՎՍՏՐԱԼԻԱ ԵՎ ՕՎԿԻԱՆԻԱ**

**ԱՄԵՐԻԿԱ**

- Հյուսիսային Ամերիկա: ԱՄՆ:Կանադա:
- Լատինական Ամերիկա: Բրազիլիա:

## **ԱՇԽԱՐՀԻ ԻՆՔՆԱՏԻՊ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՆ ՈՒ ԵՐԿՐՆԵՐԸ**

Հասարակության տարածքային կազմակերպման տարածաշրջանային մոդելները, դրա հետևանքով առաջացած հիմնախնդիրները: Աշխարհի ինքնատիպ բնատնտեսական պայմաններ ունեցող շրջանները, դրանցում հասարակության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները:

## **ՄԱՐԿԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄՈՒՈՐԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները, դրանց լուծման ժամանակակից ռազմավարությունները:

Հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների, բնության պահպանության, ժողովրդագրական, պարենային, թույլ զարգացած երկրների հետամնացության վերացման և բնակչության աղքատության հաղթահարման, տարածքային և էթնիկ հակամարտությունների, համաշխարհային օվկիանոսի համամոլորակային հիմնախնդիրները:

## **ՀԱՅԱՍՏԱՆ**

Հայկական լեռնաշխարհի երկրաբանական կառուցվածքը: Մակերևույթը: Կլիման:

Գետերը և լճերը:

ՀՀ աշխարհագրական դիրքը, վարչատարածքային կառուցվածքը, ռելիեֆի գլխավոր առանձնահատկությունները: Լեռնաշղթաները, սարահարթերը:

Օգտակար հանածոները: Կլիման: Ջրագրությունը: Սևանա լճի հիմնախնդիրը:

Հողերը: Բուսականությունը: Կենդանական աշխարհը: Վերընթաց լանդշաֆտային գոտիները:

Բնակչությունը: Թվաքանակը, վերարտադրությունը, մեխանիկական շարժը: Բնակչության կազմը և աշխատանքային ռեսուրսները: Բնակչության տեղաբաշխումը, տարաբնակեցումը: Քաղաքները: Մայրաքաղաք Երևանը:

ՀՀ տնտեսությունը: Ընդհանուր բնութագիրը, ճյուղային կառուցվածքը: Արդյունաբերություն. ընդհանուր բնութագիրը, ճյուղային կառուցվածքը, արդյունաբերական հանգույցները: Արդյունաբերության գլխավոր ճյուղերի բնութագիրը (էներգետիկա, լեռնահանքային և մետալուրգիական, քիմիական, մեքենաշինական, թեթև, սննդի, շինանյութերի արդյունաբերություն): Տնտեսության ոչ արտադրական ոլորտը:

Գյուղատնտեսություն. ընդհանուր բնութագիրը: Ոռոգման նշանակությունը, գյուղատնտեսական հողաբարելավման այլ միջոցառումներ: Դյուղային կառուցվածքը, գլխավոր ճյուղերի բնութագիրը (քուսաբուծություն, անասնապահություն): Տրանսպորտը, ընդհանուր բնութագիրը, գլխավոր տեսակները:

Մոցիալ-տնտեսական շրջանացումը: Վարչատարածքային միավորների աշխարհագրական բնութագիրը: Բնօգտագործումը և բնապահպանությունը: Բնօգտագործման գլխավոր ուղղությունները: Հատուկ պահպանվող տարածքները: ՀՀ կարմիր գրքերը: ՀՀ և ԼՂՀ տեղը աշխատանքի աշխարհագրական բաժանման համակարգում: Արտաքին տնտեսական կապերը: Մասնակցությունը միջազգային կազմակերպություններին:

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ավագ դպրոցի խորացված ուսուցման ծրագիր

10-րդ դասարան

(Շաբաթական 4 (3) ժամ, Ընդամենը՝ 136 (102) ժամ)<sup>3</sup>

## **Թեմա - ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐ-ՆԵՐԸ 3 (5) ժամ**

Աշխարհագրությունը որպես գիտություն, աշխարհագրության զարգացումը:

Աշխարհագրության ճյուղերը և դրանց փոխադարձ կապը, աշխարհագրության կապը մյուս գիտությունների հետ: Աշխարհագրության բոլոր ճյուղերի համար ընդհանուր ուսումնասիրության օբյեկտները, տարածքային կառուցվածքային միավորները և դրանցից յուրաքանչյուրին բնորոշ օրինաչափությունները:

Աշխարհագրության արդի խնդիրները և գործնական նշանակությունը:

## **Թեմա-ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ 15(22) ժամ**

Գաղափար հորիզոնի և դրա կողմերի մասին: Տեղանքում կողմնորոշվելու եղանակները: Ազիմուտ: Մասշտաբ, դրա տեսակներն ու գործնական նշանակությունը:

Հատակագիծ և քարտեզ: Գլոբուս: Աստիճանագանցը և դրա տարրերը: Երկրի պտտման երևակայական առանցք, բևեռներ, միջօրեականներ, զուգահեռականներ (հասարակած, արևադարձեր, բևեռային շրջագծեր):

Աշխարհագրական լայնություն և երկայնություն: Քարտեզի վրա կետի աշխարհագրական կոորդինատները որոշելը:

Քարտեզների և գլոբուսների մասշտաբները: Աշխարհագրական քարտեզների տարբերակումն ըստ տարածքի ընդգրկման, բովանդակության, նշանակման:

Աշխարհագրական քարտեզների հիմնական պրոյեկցիաները, աղավաղումների բնույթը (երկարություններ, անկյուններ, մակերեսներ): Տեղանքի հատակագիծ: Տեղագրական քարտեզ:

Քարտեզի պայմանական նշանները: Աշխարհագրական երևույթների և օբյեկտների պատկերման հիմնական մեթոդները: Քարտեզագրական ընդհանրացում (գեներալիզացիա): Հորիզոնականներ (իզոհիպսեր) և իզոբաթեր:

Աշխարհատեղեկատվական(գեոինֆորմացիոն) համակարգեր, դրանց կիրառական նշանակությունը:

---

<sup>3</sup> Ծրագրում թեմատիկ պլանավորումը տրված է շաբաթական 4, իսկ փակագծերում 3 դասաժամի համար: Համապատասխան տարբերությամբ նշված են յուրաքանչյուր թեմային հատկացված ժամաքանակները:

Աշխարհագրական քարտեզների(այդ թվում՝ տեղագրական) նշանակությունը գիտական ուսումնասիրությունների և մարդու առօրյա գործունեության համար: Աշխարհագրական քարտեզները որպես տեղեկատվության աղբյուր:

*Գործնական աշխատանք<sup>4</sup>-4 ժամ*

### **Թեմա - ԵՐԿՐԻ ՁԵՎԸ, ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՐԺՈՒՄԸ 14 (18) ժամ**

Երկրի ձևն ու չափերը: Երկրի ձևի մասին պատկերացումներն անցյալում: Երկրագնդի առաջացումը: Երկրի ձևի(գեոիդ), չափերի, ներքին կառուցվածքի վերաբերյալ ժամանակակից պատկերացումները: Երկրի գնդաձևության ժամանակակից ապացույցները: Երկրի մագնիսականությունը: Երկրի գրավիտացիոն (ծանրահակ) դաշտը:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների նշանակությունը երկրագնդի յուրացման և ուսումնասիրման համար: Երկրի օրական պտույտը և դրա աշխարհագրական նշանակությունը: Երկրի տարեկան պտույտը (շարժումը) և դրա աշխարհագրական հետևանքները: Տարվա եղանակների հերթափոխությունը: Ժամային գոտիներ:

*Գործնական աշխատանք-3 ժամ*

### **ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹԸ ԵՎ ԴՐԱ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

#### **24 (36) ժամ**

Հասկացություն աշխարհագրական թաղանթի մասին, դրա բաղադրամասերը:

Աշխարհագրական թաղանթի ոլորտներն ու դրանց փոխադարձ կապը:

Աշխարհագրական միջավայր: Մարդու դերը աշխարհագրական միջավայրում:

Աշխարհագրական թաղանթի ոլորտները. քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ: Դրանց ֆիզիկաքիմիական հատկությունները, դրանց ուղղաձիգ և հորիզոնական (տարածական) կառուցվածքները, յուրահատուկ գործընթացներն ու երևույթները: Աշխարհագրական թաղանթի ոլորտների փոխկապվածությունը և փոխազդեցությունը:

Աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշները, ամբողջականությունը, կառուցվածքայնությունը, ռիթմայնությունը, գոտիականությունը: Աշխարհագրական թաղանթի տարածական անհամասեռությունը պայմանավորող հիմնական բաղադրիչները, գործոնները: Աշխարհագրական գոտիները և բնական զոնաները որպես բնատարածքային համալիրներ(ԲՏՀ), ազոնալ ԲՏՀ-ներ: Նյութերի և էներգիայի շրջապտույտը աշխարհագրական թաղանթում:

Աշխարհագրական թաղանթում ընթացող պրոցեսների էներգետիկ աղբյուրները. արեգակնային և երկրագնդի ներքին ջերմային էներգիա:

Աշխարհագրական թաղանթը որպես երկրագնդի համամոլորակային բնատարածքային համալիր: Նրա զարգացման օրինաչափությունները: Նյութերի, օդի, ջրի և օրգանիզմների շրջապտույտը աշխարհագրական թաղանթում:

---

<sup>4</sup> Գործնական աշխատանքներին հատկացված ժամաքանակը ներառված է տվյալ թեմային հատկացված ընդհանուր ժամաքանակի մեջ:

Մարդու գործունեությունը աշխարհագրական թաղանթում: Երկրագնդի բնակեցումը և յուրացումը մարդու կողմից: Մարդու լուր: Մարդկային քաղաքակրթությունների զարգացումը: Հին աշխարհ, միջին դարեր, նոր և նորագույն ժամանակներ:

### **Երկրագնդի կլիմայական գոտիները**

Երկրագնդի կլիմայական գոտիները և մարզերը: Հիմնական և անցումային կլիմայական գոտիները: Հասարակածային, մերձհասարակածային, արևադարձային, մերձարևադարձային, բարեխառն, մերձարկտիկական (մերձանտարկտիկական), արկտիկական (անտարկտիկական) գոտիներ:

### **Երկրագնդի բնական զոնաները**

Գաղափար զոնայականության մասին: Զոնաների հերթափոխությունն ըստ աշխարհագրական լայնության և ծովի մակարդակից ունեցած բարձրության: Լայնակի զոնայականություն: Ուղղահիգ գոտիականություն: Հասարակածային խոնավ մշտադալար անտառների ու սավաննաների զոնաների բնութագիրը: Անապատներ և կիսաանապատներ, դրանց բնութագիրը ու տարածումը: Տափաստանների զոնայի բնութագիրը: Բարեխառն գոտու անտառային, մերձարկտիկական (մերձանտարկտիկական) անտառատունդրայի, տունդրայի, արկտիկական(անտարկտիկական) անապատների (սառցային) զոնաների բնութագիրը:

*Գործնական աշխատանք -3 ժամ*

### **Թեմա-ՔԱՐՈՒՄՍ 22(28) ժամ**

Երկրի ներքին կառուցվածքը, միջուկ, միջնապատյան, քարոլորտ-երկրակեղև:

Երկրակեղևը կազմող ապարները: Երկրի ներքին ուժերը: Երկրակեղևի շարժումները և դրանց հետևանքները: Քարոլորտի սալերը : Պլատֆորմներ և գեոսինկլինալներ: Հրաբուխներ, առաջացումը, տարածումը: Երկրաշարժեր, առաջացումը, երկրագնդի երկրաշարժավտանգ շրջանները: Երկրաշարժից պաշտպանվելու կանոնները: Երկրի մակերևույթի ձևերը, հարթավայրեր (ցածրավայրեր, դաշտավայրեր, բարձրավայրեր, սարահարթեր), բլուրներ, լեռներ, լեռնաշղթաներ, լեռնազանգվածներ, լեռնաշխարհներ: Ցամաքի մակերևույթի բացարձակ և հարաբերական բարձրությունը: Լեռներ: Լեռների դասակարգումն ըստ բարձրության, հասակի և կառուցվածքի: Երկրի մակերևույթը փոփոխող արտածին ուժերը, հողմնահարություն: Երկրի մակերևույթի ձևերի պատկերումը քարտեզի վրա:

Քարոլորտի նշանակությունը մարդու գործունեության մեջ:

Երկրի մակերևույթը փոփոխող ներքին (ներծին) և արտաքին (արտածին) ուժերը: Հրաբուխների դերը ռելիեֆագոյացման մեջ: Հողմնահարություն: Քամու, հոսող ջրերի, սառցադաշտերի, ծովի ալբերախության աշխատանքը և դերը ռելիեֆի ձևավորման գործում: Մարդու ռելիեֆաստեղծ դերը : Ռելիեֆի ազդեցությունը մարդու տնտեսական գործունեության վրա:

*Գործնական աշխատանք, ամփոփում-4 ժամ*

**Թեմա-ՋՐՈՒՆՏ 22(27) ժամ**

Ջրոլորտի կազմը: Ջուրը բնության մեջ: Ջրի հատկանիշները: Ջրի շրջապտույտները բնության մեջ: Համաշխարհային օվկիանոս, մասերը (ծով, ծոց, նեղուց): Համաշխարհային օվկիանոսի ափագիծը (կղզի, թերակղզի):

Ջրի շարժումը օվկիանոսում, աշխարհագրական նշանակությունը: Օվկիանոսային (ծովային) հոսանքներ: Ջրի ուղղաձիգ շարժումը: Մակընթացություն, տեղատվություն, ալիքավորում, ցունամի: Օվկիանոսի ջրի ջերմությունը և աղիությունը, դրանց աշխարհագրական բաշխվածությունը: Համաշխարհային օվկիանոսի օրգանական աշխարհը: Օրգանական աշխարհի առանձնահատկությունները, տեղաբաշխումը: Համաշխարհային օվկիանոսի ռեսուրսները, օգտագործման հնարավորությունները:

Ցամաքային ջրեր, դրանց կազմը: Գետեր, մասերը, սնումը, ռեժիմը: Գետերի աշխատանքը: Էրոզիա: Էրոզիայի հիմնամակարդակ: Գետերի աշխարհագրական բաշխվածությունը: Գետերի նշանակությունը մարդու կյանքում:

Լճեր, լճային գոգավորությունների առաջացումը: Լճերի ռեժիմը: Հոսուն և անհոս, աղի և քաղցրահամ լճեր: Լճերի տարածումը: Արհեստական լճեր, ջրամբարներ: Լճերի նշանակությունը մարդու կյանքում:

Ստորերկրյա ջրեր, առաջացումը, տեսակները: Աղբյուրներ, հանքային ջրեր, գեյզերներ: Արտեզյան ավազաններ: Ստորերկրյա ջրերի դերը բնության մեջ և մարդու կյանքում: Ճահիճներ, առաջացումը, տիպերը: Ճահիճների տարածումը: Ճահիճների դերը մարդու կյանքում: Ճահիճների չորացումը:

Սառցադաշտեր, առաջացումը: Չյան գիծ: Սառցադաշտերի տիպերը: Մայրցամաքային և լեռնային սառցադաշտեր: Սառցադաշտերի տարածումը: Սառցադաշտերի աշխատանքը: Սառցաքերում (էկվարացիա): Մորեններ: Սառցադաշտերը որպես քաղցրահամ ջրի աղբյուր:

Ջրոլորտի բաղադրիչների փոխադարձ կապը և փոխապայմանավորվածությունը: Ջրոլորտի պահպանությունը: Քաղցրահամ ջրի հիմնախնդիրը: Ջրի խնայողաբար օգտագործումը:

*Գործնական աշխատանք-4 ժամ*



# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ավագ դպրոցի խորացված ուսուցման ծրագիր

(շարունակություն)

11-րդ դասարան

(Շաբաթական 5 ժամ, Ընդամենը՝ 170 ժամ)

### **Թեմա - ՄԹՆՈԼՈՐՏ (26 ժամ)**

Մթնոլորտի սահմանները, կազմը: Մթնոլորտի շերտային կառուցվածքը: Մթնոլորտի տարացումը: Օդի ջերմաստիճան: Օդի ջերմաստիճանի օրական և տարեկան ընթացքը:

Ջերմության բաշխումը Երկրի վրա: Ջերմության փոփոխությունն ըստ բարձրության և աշխարհագրական լայնության: Հավասարաջերմեր (իզոթերմեր): Ջերմային գոտիներ: Երկրի վրա օդի ջերմության բարձրացման ժամանակակից միտումը:

Մթնոլորտային ճնշում: Ծնշաչափ: Նորմալ մթնոլորտային ճնշում: Մթնոլորտային ճնշման բաշխումը Երկրագնդի վրա, դրա հետևանքները: Իզոբարեր,

Քամի, առաջացումը: Քամու ցուցանիշները՝ արագություն, ուժ, ուղղություն, դրանց չափումը: Հողմացույց (ֆյուգեր), հողմաչափ (անեմոմետր): Քամու վարդը, նշանակությունը:

Քամու ուժի օգտագործման հնարավորությունները: Հողմակայաններ: Օդի բարձր և ցածր ճնշման մարզեր, ցիկլոններ, անտիցիկլոններ:

Մթնոլորտի խոնավությունը: Գոլորշացում, գոլորշունակություն, խոնավացման գործակից, բացարձակ և հարաբերական խոնավություն: Մառախուղ և ամպեր: Ամպերի տեսակները, ամպամածություն: Մթնոլորտային տեղումներ, առաջացումը, տեսակները: Տեղումների չափումը: Տեղումների անհավասարաչափ բաշխումը Երկրի վրա: Չոր և խոնավ շրջաններ:

Եղանակ: Եղանակաստեղծ տարրերը: Եղանակի տիպերը: Եղանակի դիտումներ, նշանակությունը: Օդերևութաբանական կայաններ: Եղանակի կանխագուշակում, դրա նշանակությունը: Կլիմա, կլիմայաստեղծ հիմնական գործոնները: Կլիմայի հիմնական տիպերը: Մթնոլորտի և կենդանի օրգանիզմների փոխազդեցությունը: Մթնոլորտի պահպանությունը և մարդու առողջությունը:

*Գործնական աշխատանք-5 ժամ*

### **Թեմա - ԿԵՆՍՈԼՈՐՏ (9 ժամ)**

Կենսոլորտ, դրա բաղադրիչները: Կենդանի օրգանիզմները որպես կենսոլորտի հիմք. նրանց կապը շրջակա միջավայրի հետ, բնորոշ հատկանիշները, բնակեցման վայրերը:

Բույսերի և կենդանիների բազմազանությունը և դերը կենսոլորտում:

Հող. առաջացումը, կազմը, կառուցվածքը, պահպանությունը: Օրգանիզմների փոխադարձ կապը բնական համակեցություններում և հարմարվածությունը շրջակա միջավայրի պայմաններին:

Բնատարածքային համալիր: Մարդը կենսոլորտի բաղադրիչ և նրա դերը կենսոլորտում:

*Գործնական աշխատանք-2 ժամ*

### **Թեմա - ՄԱՅՐՑԱՄԱԲՆԵՐ ԵՎ ՕՎԿԻԱՆՈՄՆԵՐ (78 ժամ)**

#### ***Ենթաթեմա - Աֆրիկա , 12 ժամ***

Աշխարհագրական դիրքը: Ափերի գծագրությունը: Մակերևույթը: Կլիման, աշխարհագրական դիրքի, մթնոլորտի շրջանառության և ռելիեֆի ազդեցությունը կլիմայի վրա: Կլիմայական գոտիները և մարզերը:

Գետերը և լճերը: Բնական զոնաները: Սավաննաներ: Անապատներ և կիսանապատներ: Մարդն Աֆրիկայում: Աֆրիկայի խոշոր պետությունները: Աֆրիկայի ենթացամաքները:

#### ***Ենթաթեմա-Ավստրալիա , 6 ժամ***

Աշխարհագրական դիրքը: Ափերի գծագրությունը: Հայտնագործումն ու հետազոտությունը: Մակերևույթը: Կլիման: Կլիմայական գոտիները, մարզերը: Գետերը, լճերը: Բնական զոնաները: Բուսական և կենդանական աշխարհի յուրահատկությունները: Մարդն Ավստրալիայում: Ավստրալիայի ենթացամաքները:

#### ***Ենթաթեմա-Անտարկտիդա , 3 ժամ***

Աշխարհագրական դիրքը, ափագիծը: Անտարկտիդայի ժամանակակից հետազոտությունները: Սառցածածկույթը և մակերևույթը: Կլիման, օրգանական աշխարհը:

#### ***Ենթաթեմա - Հարավային Ամերիկա , 12 ժամ***

Աշխարհագրական դիրքը: Ափերի գծագրությունը: Մակերևույթը: Կլիման: Կլիմայական գոտիները, մարզերը: Գետերը և լճերը: Բնական զոնաները, խոնավ հասարակածային անտառներ: Վերընթաց գոտիականությունը Անդերում: Մարդը Հարավային Ամերիկայում: Խոշոր պետությունները: Հարավային Ամերիկայի ենթացամաքները:

#### ***Ենթաթեմա- Հյուսիսային Ամերիկա , 13 ժամ***

Աշխարհագրական դիրքը: Ափերի գծագրությունը: Մակերևույթը: Կլիման: Կլիմայական գոտիները և մարզերը: Գետերը և լճերը: Բնական զոնաները, տարածման առանձնահատկությունները: Արկտիկական անապատներ, տունդրա:

Մարդը Հյուսիսային Ամերիկայում: Խոշոր պետությունները: Հյուսիսային Ամերիկայի ենթացամաքները:

### ***Ենթաթեմա-Եվրասիա , 23 ժամ***

Աշխարհագրական դիրքը: Ափերի գծագրությունը: Ափերը ողողող օվկիանոսները և ծովերը: Երկրաբանական կառուցվածքը և մակերևույթը: Խոշոր հարթավայրերը և լեռները: Երկրաշարժերի և հրաբուխների շրջանները: Կլիման, կլիմագոյացնող գործոնները: Կլիմայական գոտիները և մարզերը:

Գետերը և լճերը. Հյուսիսային սառուցյալ, Ատլանտյան, Խաղաղ, Հնդկական օվկիանոսների և ներքին հոսքի ավազանների գետերն ու լճերը:

Բնական զոնաները. դրանց հերթափոխությունը: Բարեխառն գոտու անտառներ: Անտառատափաստաններ և տափաստաններ: Վերընթաց գոտիականությունը: Մարդը Եվրասիայում: Գլխավոր պետությունները: Եվրասիայի ենթացամաքները:

### ***Ենթաթեմա-Օվկիանոսներ, 7 ժամ***

Խաղաղ, Ատլանտյան, Հնդկական, Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսների աշխարհագրական դիրքը, ափագիծը, բնական պայմանները, ջրաբանական ռեժիմը: Օրգանական աշխարհը և մյուս հարստությունները: Մարդը և օվկիանոսը:

### ***Գործնական աշխատանք, 7 ժամ***

## **Թեմա-ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ (22 ժամ)**

Աշխարհի քաղաքական բաժանումը: Քաղաքական քարտեզի ձևավորման փուլերը: Պետությունների խմբավորումը ըստ տարածքի մեծության, բնակչության թվի, աշխարհագրական դիրքի, կառավարման ձևի, վարչատարածքային կառուցվածքի, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի:

Աշխարհաքաղաքականություն(գեոպոլիտիկա), հիմնական տեսություններն ու հայեցակարգերը: Յիկլային զարգացումը և համաշխարհային լիդերության հայեցակարգերը: Աշխարհաքաղաքականության ազդեցությունը միջազգային հաղորդակցության ուղիների տեղաբաշխման վրա: Հայաստանի Հանրապետությունը ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներում:

Աշխարհի բնակչության թիվը, թվաքանակի շարժընթացը: Բնակչության բնական շարժը: Բնակչության վերարտադրություն, դրա ռեժիմներն ու տիպերը: «Ժողովրդագրական պայթյուն», «ժողովրդագրական ճգնաժամ», «դեպոպուլյացիա», դրանց հետևանքները:

Ժողովրդագրական քաղաքականություն: դրա դրսևորումը բնակչության վերարտադրության տարբեր տիպի երկրներում:

Բնակչության մեխանիկական շարժ (միգրացիա, գաղթ), տեսակները, պատճառները: Արդի միգրացիոն շարժերի ուղղությունները:

Աշխարհի բնակչության կազմը. սեռային, տարիքային, ռասայական, լեզվական, ազգային (էթնիկական), կրոնական, ըստ զբաղմունքի: Աշխատանքային ռեսուրսներ, տնտեսապես ակտիվ բնակչություն: Գաղափար բնակչության տարաբնակեցման մասին, տարաբնակեցման ձևերը: «Ուրբանիզացիա», «ազլոմերացիա», «մեգապոլիս», «մեգալոպոլիս» հասկացությունները: Ուրբանիզացիայի մակարդակները և տեմպերը: Ուրբանիզացիայի բնորոշ գծերը, ժամանակակից դրսևորումները: Քաղաքների դասակարգումը: Աշխարհի խոշոր քաղաքները, քաղաքային ազլոմերացիաները և մեգապոլիսները: Գյուղական տարաբնակեցում, ձևերը:

*Գործնական աշխատանք, 4 ժամ*

### **Թեմա-ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ (35 ժամ)**

Գաղափար բնական պայմանների և բնական ռեսուրսների մասին: Բնական ռեսուրսների տեսակները և խմբերը: Աշխարհի բնական ռեսուրսները, դրանց տեղաբաշխումը: Գաղափար ռեսուրսապահովվածության մասին: Աշխարհի բնակչության և երկրների ռեսուրսապահովվածությունն ըստ տարբեր ռեսուրսների: Բնական ռեսուրսների տնտեսական գնահատումը:

Գաղափար տնտեսության մասին: Տեղը հասարակական կյանքի ոլորտների համակարգում: Տնտեսության զարգացման գործոնները:

Գաղափար համաշխարհային տնտեսության մասին: Համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալները, զարգացման փուլերը, ոլորտները: «Տնտեսության ճյուղ» հասկացությունը: Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքը: Տնտեսության տարածքային տարբերությունների առաջացման պատճառները:

Աշխատանքի աշխարհագրական (տարածքային) բաժանում, դրա տեսակները: Աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանում: «Մասնագիտացում», «միջազգային տնտեսական ինտեգրացիա» (համագործակցություն):

Աշխարհի արդյունաբերությունը, դերը, ճյուղային կառուցվածքը, գլխավոր ճյուղերը: Աշխարհի արդյունաբերության, զարգացման միտումները, ճյուղային կառուցվածքի և առանձին ճյուղերի(վառելիքաէներգետիկ, լեռնահանքային, մետաղաձուլության, մեքենաշինության, քիմիական, անտառային, թեթև) տեղաբաշխման գործոնները, սկզբունքները, մոդելները. տեխնոլոգիական վերազինում, հումքի և աշխատուժի հիմնախնդիր, էկոլոգիական, տնտեսական կապերի գործոններ և այլն:

Արդյունահանող և վերամշակող արդյունաբերություն: Գիտատար, նյութատար, աշխատատար, էներգատար և ջրատար արտադրություն: Արդյունաբերապես զարգացած երկրները: Արդյունաբերության տարածքային կազմակերպման սկզբունքները և ձևերը:

Աշխարհի գյուղատնտեսությունը. դերը ճյուղային կառուցվածքը: Աշխարհի հողային ֆոնդը:

Աշխարհի գյուղատնտեսության ճյուղերի(բուսաբուծություն, անասնապահություն, ձկնորսություն) զարգացման միտումները, գլխավոր ուղղությունները, տեղաբաշխման շրջանները: Էքստենսիվ և ինտենսիվ, ապրանքային և ոչ ապրանքային գյուղատնտեսություն: Գյուղատնտեսական հողաբարելավման և ագրոտեխնիկական արդյունավետ միջոցառումների օգտագործումը: Գեներտիկորեն փոփոխված(մոդիֆիկացված) բուսական և կենդանական օրգանիզմների տարածման աշխարհագրությունը:

Աշխարհի տրանսպորտը և կապը, դերը, կառուցվածքը: Համաշխարհային տրանսպորտային համակարգ. տրանսպորտային ուղիներ, միջոցներ, ձեռնարկություններ: Տրանսպորտի տեսակները. ցամաքային, ջրային, օդային, տեղաբաշխումը: Տրանսպորտի հիմնական ցուցանիշները. ուղևորաշրջանառություն, բեռնաշրջանառություն, տրանսպորտային ցանցի խտություն: Տրանսպորտային հանգույց: Միջազգային տրանսպորտային ուղիները, ներուցները, ջրանցքները: Տրանսպորտի տարբեր տեսակներով աշխարհի առաջատար երկրները: Տրանսպորտի տարբեր տեսակների զարգացման հեռանկարները:

Կապի դերը ինֆորմացիոն հասարակության զարգացման գործում: Տրանսպորտի և կապի դերը աշխատանքի աշխարհագրական բաժանման մեջ:

Տնտեսության սպասարկման ոլորտ: Գերը արդի աշխարհում: Դյուրային կառուցվածքը: Կապը նյութական արտադրության հետ: Տուրիստական ինդուստրիա: Տուրիզմի համաշխարհային շրջանները և կենտրոնները:

Միջազգային տնտեսական հարաբերությունները: Միջազգային կազմակերպությունները: Արտաքին առևտուր: Արտաքին առևտրի շրջանառությունը: Առևտրային հաշվեկշիռ: Արտահանման և ներմուծման կառուցվածքը:

Համաշխարհային առևտրի հիմնական ապրանքատեսակները:

Հայաստանի Հանրապետության տեղը աշխարհում:

*Գործնական աշխատանք, 5 ժամ*

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ավագ դպրոցի խորացված ուսուցման ծրագիր

(շարունակություն)

12-րդ դասարան

(Շաբաթական 8 ժամ, Ընդամենը՝ 272 ժամ)

ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՐ-  
ՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ (72 ժամ)

**Թեմա- ԵՎՐԱՍԻԱ-Ներածություն : Եվրասիայի հասարակական-  
աշխարհագրական բաժանումը, Եվրոպա -15 ժամ**

Արևելյան Եվրոպա\* : Աշխարհագրական դիրքը, սահմանները: Կազմը և քաղաքական քարտեզը, տարածաշրջանի աշխարհագրական առանձնահատկությունները: Բնական պայմանները և ռեսուրսները: Բնակչությունը, թիվը, շարժը, կազմը, տեղաբաշխումը, ուրբանիզացիան: Տարածաշրջանի տնտեսության բնութագիրը, առանձնահատկությունները, տեղը համաշխարհային տնտեսության և քաղաքակրթության մեջ: Տարածաշրջանի հիմնախնդիրները:

Ռուսաստանի Դաշնություն\*\* : Աշխարհագրական դիրքը, սահմանները, չափերը, պետական կարգը, վարչաքաղաքական բաժանումը: Բնական պայմանների և ռեսուրսների ընդհանուր բնութագիրը, դրանց տնտեսական նշանակությունը : Բնակչությունը, բնակչության թիվը, բնական և մեխանիկական շարժերը, բնակչության կազմը, տեղաբաշխումը, ուրբանիզացիան, աշխատանքային ռեսուրսները: Տնտեսությունը. ճյուղային կառուցվածքը: Արդյունաբերության և գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը, դրանց տեղաբաշխումը: Երկրի տեղը աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման համակարգում: Երկրի ավանդը համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Տնտեսական գլխավոր գործընկերները: Տնտեսության տարածքային կազմակերպումը, տարածաշրջանային տարբերությունները:

Ուկրաինա:

Հարավային Եվրոպա: Իտալիա:

Արևմտյան Եվրոպա: Գերմանիա: Ֆրանսիա: Մեծ Բրիտանիա: Հյուսիսային Եվրոպա: Գործնական աշխատանք, 2 ժամ

\* Մյուս տարածաշրջանները ներկայացվում են նույն սխեմայով:

\*\* Մյուս պետությունները ներկայացվում են նույն սխեմայով:

***Թեմա- Ասիա-16 ժամ***

Կենտրոնական Ասիա: Հարավ-Արևմտյան Ասիա: Վրաստան: Ադրբեջան: Թուրքիա: Իրան: Հարավային Ասիա: Հնդկաստան: Հարավ-Արևելյան Ասիա: Արևելյան Ասիա: Չինաստան: Ճապոնիա:

*Գործնական աշխատանք, 5 ժամ*

***Թեմա-Աֆրիկա-5 ժամ***

Եգիպտոս: Հարավաֆրիկյան Հանրապետություն:

***Թեմա-Ակտալիա և Օվկիանիա, 3 ժամ***

*Գործնական աշխատանք, 2 ժամ*

***Թեմա-Ամերիկա-10 ժամ***

Հյուսիսային Ամերիկա: ԱՄՆ: Լատինական Ամերիկա: Բրազիլիա:

*Գործնական աշխատանք, 2 ժամ*

***Թեմա- ԱՇԽԱՐՀԻ ԻՆՔՆԱՏԻՊ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՆ ՈՒ ԵՐԿՐՆԵՐԸ- 7 ժամ***

Ներածություն: Հասարակության տարածքային կազմակերպման տարածաշրջանային և համամոլորակային մոդելները, դրա հետևանքով առաջացած հիմնախնդիրները: Աշխարհի ինքնատիպ բնատնտեսական պայմաններ ունեցող շրջանները, դրանցում հասարակության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները:

Ուրբանիզացված տարածաշրջաններ և երկրներ(Արևմտյան Եվրոպա, ԱՄՆ-ի ծովափնյա շրջաններ, Ճապոնիա): Տնտեսական սրընթաց աճ արձանագրած տարածաշրջաններ և երկրներ(Ասիական վագրեր, Չինաստան): Լեռնային տարածաշրջաններ ու երկրներ, զարգացման բնատնտեսական պայմանները, հիմնական առանձնահատկությունները:

Չորային (արիդ) կլիմայական պայմաններով ասիական և աֆրիկյան տարածաշրջանների և երկրների տնտեսության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները: Ագրարային տարածաշրջանների և երկրների զարգացման հիմնախնդիրները:

Արևմտյան Եվրոպան որպես քաղաքական և տնտեսական ինտեգրացիոն գործընթացի տարածաշրջան: Ռուսաստանի Դաշնությունը որպես բնառեստրային մեծ ներուժ ունեցող պետություն: ԱՄՆ-ը որպես համաշխարհային քաղաքական և տնտեսական դերակատարում ունեցող երկիր:

## **Թեմա- ՍԱՐԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄՈՒՈՐԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

### **– 10 ժամ**

Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները, դրանց լուծման ժամանակակից ռազմավարությունները:

Հանքային հումքի և վառելիքաւէներգետիկ ռեսուրսների համամոլորակային հիմնախնդիրը<sup>5</sup> :

Բնության պահպանության համամոլորակային հիմնախնդիրը:

Ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդիրը:

Պարենային համամոլորակային հիմնախնդիրը:

Թույլ զարգացած երկրների հետամնացության վերացման և բնակչության աղքատության հաղթահարման համամոլորակային հիմնախնդիրը:

Տարածքային և էթնիկ հակամարտությունների հիմնախնդիրը:

Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրը:

*Գործնական աշխատանք, 2 ժամ*

### **ՀԱՅԱՍՏԱՆ (64 ժամ)**

#### **Թեմա- Հայկական լեռնաշխարհի բնությունը- 6 ժամ**

Հայաստանն աշխարհի քարտեզում. սահմանները, աշխարհագրական դիրքը:

Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական հետազոտության համառոտ պատմությունը:

Հայկական լեռնաշխարհը Ալպ-Հիմալայան լեռնային համակարգում: Հայկական լեռնաշխարհի երկրաբանական կառուցվածքը: Մեյսմիկությունը և Հրաբխականությունը: Ռելիեֆի հիմնական ձևերը. Եզրային լեռների համակարգ, Միջնաշխարհ (Հայկական բարձրավանդակ), Միջլեռնային գոգավորություններ: Կլիման: Նեոքին ջրերը. խոշոր գետերը, լճերը, ստորերկրյա ջրերը, սառցադաշտերը:

Հողերը, բուսականությունը, կենդանական աշխարհը:

*Գործնական աշխատանք, 2 ժամ*

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

#### **Թեմա- Ընդհանուր ակնարկ, բնությունը (15 ժամ)**

Տարածքը, սահմանները: Աշխարհագրական դիրքը. ֆիզիկաաշխարհագրական, տնտեսաաշխարհագրական, քաղաքաաշխարհագրական, վարչատարածքային բաժանումները: Ժամանակակից վարչատարածքային կառուցվածքը: Երկրաբանական

---

<sup>5</sup> Բոլոր հիմնախնդիրները ուսումնասիրվում են հետևյալ սխեմայով՝ հիմնախնդրի էությունը, առաջացման պատճառները, կապը համամոլորակային մյուս հիմնախնդիրների հետ, լուծման ուղիները:



կառուցվածքը: Օգտակար հանածոները, մետաղային, ոչ մետաղային: Հանքային ջրեր: Ռելիեֆը: Լեռնագրական մարզերը, Հյուսիսային և Հարավային ծալքաբեկորավոր լեռների ու միջլեռնային գոգավորությունների, Հրաբխային լեռնավահանների և սարավանդների, Միջինարաքսյան գոգավորության:

Կլիման, կլիմագոյացնող գործոնները, աշխարհագրական դիրքը, մթնոլորտի շրջանառությունը, ռելիեֆը: Ջերմային և խոնավացման պայմանները: Կլիմայի վերընթաց գոտիականությունը: Կլիմայի ազդեցությունը մադու տնտեսական գործունեության վրա:

Ներքին ջրերը, ջրային հաշվեկշիռը: Գետերը, գետային ավազանները (Արաքսի, Կուրի): Գետերի սնումը և ռեժիմը, գետերի հիմնական հատկանիշները: Գլխավոր գետերը, դրանց տնտեսական նշանակությունը: Լճերը, դրանց ծագումը: Սևանա լիճ: Լճերի օգտագործումը: Ջրամբարները, դրանց նշանակությունը: Արտեզյան ավազաններ:

Հողային ծածկույթը: Հողերի վերընթաց գոտիականությունը, հողերի հիմնական տիպերը: Բուսականությունը: Բուսականության բազմազանությունը, դրա պատճառները: Բուսածածկույթի վերընթաց գոտիականությունը: Բուսածածկույթի օգտագործումը: Կենդանական աշխարհը, բազմազանությունը, պատճառները: Կենդանիների գոտիական տարածումը:

Վերընթաց լանդշաֆտային գոտիականությունը: Տարածքի ֆիզիկաաշխարհագրական շրջանացման սխեման:

*Գործնական աշխատանք, 4 ժամ*

### ***Թեմա - Բնակչությունը- 7 ժամ***

Բնակչության թվաքանակի և տեղաբաշխման փոփոխությունները, զանգվածային տեղաշարժերը Հայկական լեռնաշխարհում: Հայկական սփյուռք, ձևավորումը, արդի աշխարհագրությունը:

ՀՀ բնակչության թիվը, շարժընթացը, կազմը, ազգային, սեռատարիքային, սոցիալական, կրոնական: Աշխատանքային ռեսուրսներ: Բնակչության բնական և մեխանիկական շարժերը: Բնակչության տեղաբաշխումը, դրա վրա ազդող գործոնները: Տարաբնակեցումը:

Քաղաքային և գյուղական տարաբնակեցում: Ուրբանիզացման մակարդակը:

Մայրաքաղաք Երևան: Աշխարհագրական բնութագիրը: Խոշոր քաղաքները:

*Գործնական աշխատանք, 5 ժամ*

### ***Թեմա - Տնտեսությունը 18 ժամ***

Ընդհանուր բնութագիրը, զարգացման նախադրյալները, ճյուղային կառուցվածքը, տարածքային կազմակերպումը:

### ***Արդյունաբերությունը***

Ընդհանուր բնութագիրը, ճյուղային կառուցվածքը: Վառելիքա-էներգետիկ համալիր. կազմը, հաշվեկշիռը: Խոշոր էլեկտրակայանները: Սետալուրգիական արդյունաբերություն. զարգացման նախադրյալները, հումքային բազան, ենթաճյուղերը, տեղաբաշխումը: Սեքենա-շինություն. զարգացման նախադրյալները, գլխավոր ենթաճյուղերը, տեղաբաշխումը: Քիմիական արդյունաբերություն. զարգացման նախադրյալները, գլխավոր ենթաճյուղերը, տեղաբաշխումը: Թեթև արդյունաբերություն. ենթաճյուղերը, տեղաբաշխումը: Սննդի արդյունաբերություն. զարգացման նախադրյալները, ենթաճյուղերը, տեղաբաշխումը: Շինանյութերի արդյունաբերություն. հումքային բազան, ենթաճյուղերը, տեղաբաշխումը: արդյունաբերության մյուս ճյուղերը, ապակու և հախճապակու, փայտամշակման և այլն: Բարձր տեխնոլոգիաների արտադրությունը: Արդյունաբերության տարածքային կազմակերպումը, արդյունաբերական գլխավոր հանգույցները:

*Գործնական աշխատանք, 5 ժամ*

### ***Գյուղատնտեսությունը***

Ընդհանուր բնութագիրը, գլխավոր ճյուղերը: Հողային ֆոնդը, առանձնահատկությունները, կառուցվածքը: Հողաբարելավում, դրա եղանակները: Ոռոգման համակարգը:

Բուսաբուծություն, ենթաճյուղերը: Հացահատիկային, տեխնիկական, կերային մշակաբույսերի, պտղաբուծության և խաղողագործության ու կարտոֆիլի մշակության տեղաբաշխումը:

Անասնապահություն, զարգացման նախադրյալները, գլխավոր ենթաճյուղերը: Տավարաբուծության, ոչխարաբուծության, խոզաբուծության, թռչնաբուծության, մեղվաբուծության զարգացման նախադրյալները, տեղաբաշխումը:

*Գործնական աշխատանք, 2 ժամ*

### ***Տրանսպորտ***

Ընդհանուր բնութագիրը, գլխավոր տեսակները: ՀՀ տրանսպորտի գլխավոր ցուցանիշները. ցանցի խտություն, բեռնաշրջանառություն, ուղևորաշրջանառություն: Երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, խողովակաշարային, էլեկտրոնային տրանսպորտի ճյուղերի տեղաբաշխումը:

*Գործնական աշխատանք, 1 ժամ*

***Թեմա- Տնտեսության ոչ արտադրական (սպասարկման) ոլորտը***

Ընդհանուր բնութագիրը: Գլխավոր ենթաճյուղերը: Զբոսաշրջություն. զարգացման նախադրյալները, հեռանկարները:

***Թեմա - Բնօգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները, 1- ժամ***

Հատուկ պահպանվող տարածքներ. ազգային պարկեր, արգելոցներ, արգելավայրեր: ՀՀ Կարմիր գրքերը:

***Թեմա - Զարգացման շրջանային տարբերությունները, 13 ժամ***

Սոցիալ-տնտեսական շրջանացումը: Շրջանային մասնագիտացումը:

Վարչական մարզերը: Մարզի համալիր աշխարհագրական բնութագիրը. աշխարհագրական դիրքը, բնությունը, բնակչությունը, տնտեսությունը:

Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ:

*Գործնական աշխատանք, 3 ժամ*

***Թեմա-Հայաստանի Հանրապետությունը աշխատանքի միջազգային քաժանման համակարգում: Արտաքին տնտեսական կապերը, 1 ժամ***

***Թեմա-Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, 3 ժամ***

Ընդհանուր բնութագիրը, պատմաաշխարհագրական առանձնահատկությունները, կարգավիճակը: Բնությունը: Բնակչությունը: Տնտեսությունը:

*Ամփոփիչ կրկնություն, 3 ժամ:*

***10-12-րդ դասարանների աշխարհագրության դասընթացի ամփոփիչ կրկնություն, 136 ժամ***

## Ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման կարգը

1. Ուսուցման արդյունքների գնահատում կատարելու համար ստուգվում է սովորողների պատրաստվածությունը (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) և որոշվում, թե այն ինչքանով է համապատասխանում առարկայական չափորոշչով սովորողներին ներկայացվող պահանջներին՝ կրթական աստիճանի ավարտին, իսկ ուսումնառության ընթացքում՝ առարկայական ծրագրում ամփոփված չափորոշչային պահանջներին:
2. Ուսուցման արդյունքների ստուգումը և գնահատումը կատարվում են աշխարհագրական մտածողության (մտեցման) բաղադրիչների՝ գլոբալնության, տարածականության, համալիրայնության և կոնկրետության հաշվառմամբ: Ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման համար սովորողներին տրվում են *առաջադրանքներ*՝ հարցեր, խնդիրներ, քարտեզագրական և այլ գործնական աշխատանքներ, հանձնարարություններ, որոնց միջոցով բացահայտվում են.
  - ա) սովորողների յուրացրած գիտելիքների ամբողջականությունը, կայունությունը, հիմնավորությունը, խորությունը, համակարգվածությունը,
  - բ) գիտելիքները ծանոթ և անծանոթ իրադրություններում կիրառելու կարողություններն ու հմտությունները,
  - գ) կատարած մտավոր գործունեությունը արտահայտելու, ներկայացնելու, շարադրելու մակարդակը, որի բացահայտման համար հաշվի են առնվում նաև թույլ տրված սխալները, անճշտությունները, թերությունները և բացթողումները:
3. Սովորողների պատրաստվածությունը բացահայտվում է հիմնականում բանավոր հարցումների և գրավոր աշխատանքների միջոցով, որոնց համար նախապես կազմվում են առաջադրանքներ և դրանց գնահատման չափանիշներ:

Առաջադրանքներն ըստ բարդության բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.

  - ա) *1-ին կարգի* բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների իմացություն, պարզ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար չեն պահանջում ինքնատիպ (ոչ ստանդարտ) մոտեցումներ, միջնորդավորված քայլեր ու հիմնավորումներ:
  - բ) *2-րդ կարգի* բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների

կայուն իմացություն, ոչ բարդ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ենթադրում են որոշակի հայտնի մեթոդներ, միջնորդավորված քայլեր, ոչ բարդ հիմնավորումներ և չեն պահանջում ինքնատիպ մոտեցումներ,

- զ) *3-րդ կարգի* բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների հիմնավոր իմացություն, բարդ, կամ ոչ լրիվ ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ենթադրում են ինքնատիպ մոտեցումներ, հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլեր, կառուցումներ, արտածումներ, հիմնավորումներ,
- դ) *բարդ* առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութին վերաբերող չափորոշչային գիտելիքների հիմնավոր և խորը իմացություն, բարդ կամ անծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ենթադրում են բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, հատուկ մեթոդներ, օժանդակ կառուցումներ, արտածումներ, հիմնավորումներ, կռահումներ:

**4. Բանավոր հարցումների** գնահատման չափանիշներ կազմելու համար հաշվի են առնվում գնահատման նպատակը, առաջադրանքի տեսակը, բովանդակությունը, դրա կատարման համար գնահատվողից ակնկալվող պատրաստվածությունը (ենթադրվում է, որ սանդղակի յուրաքանչյուր միավորը արտահայտում է տվյալ գնահատվողի ցուցաբերած պատրաստվածության առավելագույն մակարդակը, այսինքն՝ գնահատվողը սանդղակի ավելի բարձր միավորին համապատասխանող պահանջներին չի բավարարում)։

*Գրավոր աշխատանքների* ստուգման և գնահատման չափանիշներ կազմելու համար հաշվի են առնվում աշխատանքի տեսակը, բովանդակությունը, կատարման նպատակը, գնահատվողից ակնկալվող պատրաստվածությունը։

Բանավոր և գրավոր գնահատումն իրականացվում է հետևյալ սանդղակով.

- 1 միավոր** (*«շատ վատ»*). 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար պատրաստվածություն բոլորովին չի ցուցաբերում,
- 2 միավոր** (*«վատ»*). 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է մասնակի պատրաստվածություն և թույլ է տալիս էական սխալներ,
- 3 միավոր** (*«սնրավարար»*). 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ և բացթողումներ,

**4 միավոր** (*«բավարար»*). 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն (չի բացառվում, որ կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում, որը ուշադրության հրավիրելու դեպքում ի վիճակի է ինքնուրույն վերացնել),

**5 միավոր** (*«միջին»*). 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ և բացթողումներ,

**6 միավոր** (*«միջինից բարձր»*). 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն (չի բացառվում, որ կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում, որը ուշադրության հրավիրելու դեպքում ի վիճակի է ինքնուրույն վերացնել),

**7 միավոր** (*«լավ»*). 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ և բացթողումներ,

**8 միավոր** (*«շատ լավ»*). 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն (չի բացառվում, որ կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում, որը ուշադրության հրավիրելու դեպքում ի վիճակի է ինքնուրույն վերացնել),

**9 միավոր** (*«գերազանց»*). 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ դժվարավուն առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ և բացթողումներ,

**10 միավոր** (*«բացառիկ»*). դժվարավուն առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն (չի բացառվում, որ կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում, որը ուշադրության հրավիրելու դեպքում ի վիճակի է ինքնուրույն վերացնել):

5. Աշակերտի *ընթացիկ գնահատումը* կատարվում է տարբեր ձևի ստուգումների միջոցով: Ստուգման ձևերը հնարավորություն են ընձեռելու լիարժեք բացահայտել յուրաքանչյուր սովորողի պատրաստվածության առավելագույն մակարդակը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրակրթական հիմնական դպրոցի «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկաների չափորոշիչներ և ծրագրեր, Եր., 2008
2. Հանրակրթական հիմնական դպրոցի «Բնագիտություն» առարկաների չափորոշիչ և ծրագիր, Եր., 2008
3. Ա. Գրիգորյան և ուր. «Բնագիտություն» դասագիրք 5-րդ դասարանի համար: Եր. 2007
4. Լ. Գրիգորյան և ուր. «Բնագիտություն» դասագիրք 5-րդ դասարանի համար: Եր. 2007
5. Ա. Հովսեփյան և ուր., «Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն», դասագիրք 6-րդ դասարանի համար: Եր., 2007
6. Ա.Ավագյան և ուր., «Աշխարհագրություն», դասագիրք 7-րդ դասարանի համար: Եր., 2007
7. Լ.Վալեսյան, Խ.Նազարյան, «Հայաստանի աշխարհագրություն», դասագիրք 7-րդ դասարանի համար: Եր., 1999
8. Ա. Ավագյան և ուր., «Աշխարհագրություն», դասագիրք 8-րդ դասարանի համար: Եր., 2008
9. Լ.Վալեսյան, Խ.Նազարյան, «Հայաստանի աշխարհագրություն», դասագիրք 8-րդ դասարանի համար: Եր., 1998, 1999
10. Ռ. Մարգարյան, «Աշխարհագրություն» 7-րդ դասարանի համար: Եր., 2007
11. Ս.Մելքումյան, «Լեռնային Ղարաբաղի աշխարհագրություն»: Եր., 1999
12. Ա.Գասպարյան, Ռ.Սկրտչյան, Լ.Վալեսյան, «Աշխարհագրություն (բնօգտագործման և
13. բնապահպանության հիմունքներ)», դասագիրք 9-րդ դասարանի համար: Եր., 1996, 1999
14. 17.«Հանրակրթության պետական կրթակարգ», «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ», Եր., 2004:
15. 19.Հ. Գաբրիելյան-Հայկական լեռնաշխարհ, Երևան, 2000:
16. Լ. Վալեսյան, Ա. Վալեսյան- Քաղաքական աշխարհագրություն,Եր.,ԵՊՀ, 2004:
17. Աշխարհը և Հայաստանը, աշխարհագրական ատլաս, Երևան, Մակմիլան, 2004:
18. Ռ. Մարգարյան, Մ. Մանասյան-Տնտեսական աշխարհագրություն, Եր., ԵՊՀ, 2004
19. Մ. Մանասյան, Ռ. Մարգարյան-Բնակչության աշխարհագրություն, Եր., ԵՊՀ, 2003
20. Հանրակրթական դպրոցի «Աշխարհագրություն» առարկայի 5-8-րդ դասարանի ծրագիր, Եր.1999:
21. Ա. Է. Նեժնով-Իժմաիմ-իձոձե-անեձա լաձձեձեձ ”Աձիձաձեձ”,10-11էձեձնձ, Լ.,”Աձիձա”, 1998
22. Ա. Էոյո է ձձ.-Իաւայ ձեձ-անեայ ձիձաձաձեձ, օ-ձիձեձ 10-11էձ.-Itera educational, 2007

23. Ա. Ա. Ասմաթյան-Մանուկյան, Օրհան Վելիյեթ-Պեթեթ Վաթանյան, ԱՆՕ.Արժանյան, Ի., 2007
24. Максаковский В. П. “Географическая культура”, М. “Владос”, 1998
25. И.В. Душина”Программа по географии”, Москва, 2006
26. ”Школа 2100”. Образовательная программа и пути ее реализации. Выпуск 3.- М.,Баласс, 1999
27. www.ed.gov/pdf файл-Государственный стандарт общего образования.
28. www.ed.gov/pdf файл-О преподавании предмета “География” в условиях введения государственного стандарта общего образования.
29. Welcome to the Wonderful World of Geography-Runkle Geography Set by Brenda Runkle, 2007
30. **Human Geography: People, Place, and Culture** by H. J. de Blij, Alexander B. Murphy, and Erin Fouberg
31. The Ultimate Geography and Timeline Guide (with free World Outline Map), 2007
32. Cantering the Country-by Loree' Pettit and Dari Mullins, 2007
33. The Cultural Landscape: An Introduction to Human Geography (9th Edition) by James M. Rubenstein, 2007
34. The Cultural Landscape: An Introduction to Human Geography (8th Edition) by James M. Rubenstein, 2004
35. Psychogeography: Disentangling the Modern Conundrum of Psyche and Place by Will Self and Ralph Steadman, 2007
36. World Regions in Global Context: Peoples, Places, and Environments by Sallie A. Marston, Paul L. Knox, and Diana M. Liverman, 2007

**Աշխարհատեղեկատվական ուսումնական համակարգերի (GIS) և բնական ու հասարակական աշխարհագրության վերաբերյալ ինտերնետային կայքերի հասցեներ աշակերտների և աշխարհագրության ուսուցիչների համար**

<http://www.ncgia.ucsb.edu/cctp/ncgia.html> - NCGIA

[http://www.ncgia.ucsb.edu/giscc/units/u159/u159\\_f.html](http://www.ncgia.ucsb.edu/giscc/units/u159/u159_f.html).



<http://www.geo.ed.ac.uk/home/gishome.html> - Edinburgh University  
<http://www.geog.le.ac.uk/cti> - Computer in Teaching Geography Centre, UK  
<http://www.ncgia.ucsb.edu/education/curricula/giscc/units/format/outcomes.html>  
<http://www.ncgia.ucsb.edu/education/curricula/giscc/units/format/outcomes.html> - Maine, USA  
<http://libraries.maine.edu/Spatial/gisweb/spatdb/gis-lis/gi94070.html>  
[http://www.kingston.ac.uk/gis/gis\\_for\\_teachers/curriculum.htm](http://www.kingston.ac.uk/gis/gis_for_teachers/curriculum.htm) - Kingston, UK  
<http://gis.esri.com/library/userconf/educ03/p5098.pdf> - Australia  
[National Geographic: MapMachine](#)  
[Weatherbase](#)

[Emory University: Odyssey Online—Greece](#)  
[ThinkQuest: Ancient Greece](#)  
[University of Pennsylvania: Worlds Intertwined—Etruscans, Greeks, and Romans](#)

[National Geographic: Xpeditions Activity—Ancient Greece](#)  
[Teaching and learning GIS in laboratories.](#)

[http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@1d=6001&Session/@id=D5tUMAqvYc22VM76mHQks&POS\[@stateId\\_eq\\_main\]/@id=3450&POS\[@stateId\\_eq\\_note\]/@id=3450](http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@1d=6001&Session/@id=D5tUMAqvYc22VM76mHQks&POS[@stateId_eq_main]/@id=3450&POS[@stateId_eq_note]/@id=3450)

[http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@1d=6001&Session/@id=D5tUMAqvYc22VM76mHQks&POS\[@stateId\\_eq\\_main\]/@id=3252&POS\[@stateId\\_eq\\_note\]/@id=3252](http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@1d=6001&Session/@id=D5tUMAqvYc22VM76mHQks&POS[@stateId_eq_main]/@id=3252&POS[@stateId_eq_note]/@id=3252)

[http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@1d=6001&Session/@id=D5tUMAqvYc22VM76mHQks&POS\[@stateId\\_eq\\_main\]/@id=3487&POS\[@stateId\\_eq\\_note\]/@id=3487](http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@1d=6001&Session/@id=D5tUMAqvYc22VM76mHQks&POS[@stateId_eq_main]/@id=3487&POS[@stateId_eq_note]/@id=3487)

[http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@1d=6001&Session/@id=D5tUMAqvYc22VM76mHQks&POS\[@stateId\\_eq\\_main\]/@id=3276&POS\[@stateId\\_eq\\_note\]/@id=3276](http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@1d=6001&Session/@id=D5tUMAqvYc22VM76mHQks&POS[@stateId_eq_main]/@id=3276&POS[@stateId_eq_note]/@id=3276)

[http://www.nc.uk.net/nc\\_resources/entitlements/history\\_ent.htm](http://www.nc.uk.net/nc_resources/entitlements/history_ent.htm)

<http://www.qca.org.uk/ca/5-14/revised2000/edprim2a.asp>

<http://www.qca.org.uk/ca/5-14/revised2000/edprim2b.asp>

[http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@id=6001&Session/@id=D\\_5tUM..](http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@id=6001&Session/@id=D_5tUM..)

***Քննական և հասարակական աշխարհագրություն***

<http://gis.esri.com/library/userconf/educ03/p5098.pdf> - National Geographic (բնական և հասարակական աշխարհագրություն)

<http://www.nationalgeographic.com/xpeditions/lessons/17/g912/greece.html> - Պատմություն, աշխարհագրություն-ուսումնական ծրագրեր

[http://timss.bc.edu/timss1999i/pdf/T99i\\_Sci\\_05.pdf](http://timss.bc.edu/timss1999i/pdf/T99i_Sci_05.pdf) - Բնագիտություն և աշխարհագրություն (նայել 5 և 15-16 էջերը)

<http://www.txstate.edu/ucollege/gec/032204minutes.html> - Texas, USA - Բնական և հասարակական աշխարհագրություն

[http://www.tki.org.nz/r/governance/nzcf/ess\\_learning\\_e.php#social](http://www.tki.org.nz/r/governance/nzcf/ess_learning_e.php#social) - NZ - Աշխարհագրություն

<http://www.edu.gov.on.ca/eng/document/discussi/oss.pdf> - Ontario - Աշխարհ. և բնագիտ.

[http://www.minedu.govt.nz/print\\_doc.cfm?layout=document&documentid=7873&data=1&goto=00-13&fromprint=y](http://www.minedu.govt.nz/print_doc.cfm?layout=document&documentid=7873&data=1&goto=00-13&fromprint=y) (Ctrl & Click)

<http://www.ltscotland.org.uk/climatechange/> - Scotland – Աշխ.,Կլիմայի փոփոխություններ և բնագիտ.

[http://www.scoilnet.ie/geography/Res\\_finder\\_Topic.aspx](http://www.scoilnet.ie/geography/Res_finder_Topic.aspx) - Ireland - GeoEcology

<http://ascweb.unl.edu/academics/depts/envir.html> - University of Nebraska – Աշխարհ. և բնական/ հասարակական գիտություններ

<http://www.intstudy.com/articles/ec191a07.htm> - UK - Բնական և հասարակական աշխարհագրություն

<http://www.scotland.gov.uk/library5/transport/cast-14.asp> - Scotland - Հասարակական և շրջակա միջավայրի մասին գիտություններ

#### ***Հայաստանի աշխարհագրություն***

<http://www.armenianhistory.info/glossary3.htm>

[www.eurasianet.org/resource/armenia/links/history.shtml](http://www.eurasianet.org/resource/armenia/links/history.shtml) - GIS+ պատմական քարտեզներ և Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ նյութեր

[www.armenica.org/](http://www.armenica.org/)

[www.encyclopedia.com/html/section/armenia\\_history.asp](http://www.encyclopedia.com/html/section/armenia_history.asp)

[www.encarta.msn.com/enenet/features/onthisday.aspx](http://www.encarta.msn.com/enenet/features/onthisday.aspx)



